№ 101 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 15 ՄԱՅԻՍԻ ԵՐԿՐՈՐԴ 1919 ՏԱՐԻ ՀԻՆԳՇԱԲԹԻ, 15 ՄԱՅԻՍԻ № 101

ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ

ԵՐԿՐՈՐԴ ԾՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴՈՒ ՀԱՄԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Օրգան Հայ Ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի

Խմբագրութիւնը բաց է ամեն օր առ. ժամը 9-ից մինչև 3-ը։ Ձօդուածները պէտք է գրուած լինեն պարզ և մի երեսի վրայ։ Ձօդուածները կարող են ենթարկուել փոփոխման և կրճատման։ Ընդունուած յօդուածները, որոնց տակ չէ դրուած վարձատրութեան պահանջ՝ կը համարուեն ձրի։

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

Ցայտարարութիւններն ընդունուում են ամեն լեզուով տողատեղին առաջին երեսում 1 ռուբ., իսկ վերջին երեսում՝ 75 կոպ. Բժիշկների և աշխատանք փնտրողների համար որոշ զեղչ։ Մահազդի համար 25 ռուբլի։ Ցայտարարութիւնները նոյն օրուայ թերթի համար ընդունուում են մինչև ժամը 2-ը։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹ.

ապրիլի 1-ից

ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ

ՕՐԱԹԵՐԹ-ԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է.

1 ամիսը . . . . . 18 ռուբ.
3 » . . . . . 50 »
Հատուածառ . . . . . 1 ռուբ.

Հասցէն՝ Тифлисъ, Гановская ул. д. № 3

Գրասենեակը բաց է ամեն օր առաւ. ժամը 9-ից մինչև 3-ը, բացի կիրակի և տօն օրերից։ Телефонъ 16—90.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏ. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ հաշտարար բաժանմունքների և շրջանների համար հարկաւոր են

հաշտարար դատաւորներ եւ քննիչներ

Ցայտարարութիւններն ընդունուում են ամեն օր ժ. 9—11 առաւօտ. Դրիբոյեդովսկի փող. № 23, Թիֆլիսում։ 0—9

ՓՆՏՐՈՒՄ Է

Ցիգրան Գուխմաճանին իր եղբայր Եղիա Գուխմաճանը։ Խնդրում է տեղը խմացողները բարի լինեն յայտնելու հետեւեալ հասցէով՝ Сухумъ, Базарная ул. Коф. „Сасунъ“, Եղիա Գուխմաճանին։ 5—5

ՓՆՏՐՈՒՈՒՄ Է

Ադամ Առաքելեանը, 15 տարեկան, Օրդու քաղաքից, որ անյայտացել է 1918 թ. մայիս ամսին Էրզրումի յետ Նահանջի ժամանակ։ Խնդրում եմ տեղը խմացողից՝ բարի լինի յայտնելու հետեւեալ հասցէով՝ Сухумъ, Базарная ул. Коф. „Сасунъ“ Գէորգ Առաքելեանին։ 5—5

„ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ“-Ի ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ

ՑՐԻԶՆԵՐ

Դիմել խմբագրութեան՝ Գանովսկի փ. № 3.

ԲԺԻՇԿ

Խ. ԷՅԷՐՋԵԱՆ

Նախկին ասիստենտ Պարիզի Hôtel-Dieu, պրոֆ. Cilbert-ի կլինիկաների, մասնագէտ թոքերի, սրտի, ստամոքսի, լեարդի, աղեքների և երեխայոց հիւանդութիւնների։ Մեթոդիկ բժշկում թոքախտ, պլէվրիթի, բրոնխիթի, անարիւնութեան, լեարդի ուռեցքի, arterioscle-rose-ի (շնչերակների կարծրանալ) առնական անկարողութեան (էմբութացիա)։ Արմատ. բժշկում գլխացաւի կերարկութիւն ընթերային մասած սրտի հիւանդութեանց համար։ Ընդունելութիւնը առաւօտ. ժամը 10 1, երեկոյեան ժ. 5—7, կիրակի օրերը միայն 10—1։ Հասցէ՝ Միքայէլեան փ. № 41։ 00—28

ԲԺ. ԽԻՐՈՒՐԳ

Գ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆԸ

Վերադարձել է Թիֆլիս և վերանորոգել հիւանդների ընդունելութիւնը «Գրանդ-Հոտէլ» հիւրանոցում, ժամը 6—7 երեկոյեան։ 30—7

ԲԺԻՇԿ

Ա. Ա ՏԷՐԵԱՆ

Ներքին եւ երեխաների հիւանդութիւնների

Ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, առաւ. ժամը 10 և երեկ. ժամը 5—7-ը։ Զբաւորներին—ձրի։ Соолаки Бебутовская ул., № 26, телефонъ 10—92. 30—7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՄԱԿԱՆԻ

III

ՄԱՅԻՍԻ ՄԷԿԸ...

Ալէքսանդրապոլը երէկ ոսնում էր յեղափոխական աշխատաւոր ժողովրդի ամենանշանաւոր օրը։

Առաւօտից կանաչ-կարմիր դրօշակներով զարդարուած էր ամբողջ... Դաշնակցութեան ակումբը, և նրա առաջ՝ իրենց պլակատներով ու դրօշակներով, կանգնած էին «հայ յեղափոխական աշխատաւորութեան» ներկայացուցիչները, որոնցից երևի շատ քչերը գիտէին թէ ինչ է մայիսի 1-ը, ինչ է յեղափոխական աշխատաւորութիւնը և ինչ կապ ունի նրանց հետ «դաշնակցութիւնն» կազմակերպութիւնը։

Փչում էր անխուսափելի զուռնան ամբոխ հաւաքելու և «յեղափոխական մասսա» ստեղծելու նպատակով, բայց կուսակցական գաղափարականների փոխարէն հաւաքուել էին զուռնայի, աղմուկի և խլրտումի սիրահար երեխաները։

Կանգնած-պատշգամբում նայում էի հողն ու արմատները կորցրած այս «ինտերնացիոնալիստական» հոսանքի ոսնակատարութեան վրայ և յիշելով երէկուայ սայլերի վրայ բարձած դիակները, անտէր-անտիրական փողոցներում թափառող ու թափթփուկներ հաւաքող քաղցած որբերին, չգիտէի ինչով բացատրել այս անհներելի և այլանդակ շռայլութիւնը, այս ոսնը, այս՝ Պուշկինի ասած, «խնճոյքը ժանտախտի ժամանակ» (пиръ во время чумы)...

Ինչու համար էին ուրախանում։ Ինչու համար էին հրճուում։ Ցաղթե՞լ էին արդեօք, թէ՞ ոչնչացրել էին սոսկ ու հաստաճարակներ՝ տանջանքն ու զրկանքները։ Կամ մի գուցէ չգիտէին, որ հենց այստեղ, իրենց քթի տակ սայլերով դիակներ են կրում անհաղորդ ու անպատան հողին յանձնելու համար։

Իզուր հարցեր...

Փչում է զուռնան։ Աճում և ուռչում է ամբոխը, ծածանուում են յեղափոխական կարմիր դրօշակները և անա ակումբի պատշգամբի վրայ երևում է Հայաստանի Կառավարութեան մինիստր «ընկեր» Սահակ Թորոսեանը, որի գալստեան մասին դաշնակցականները հետևեալ թռուցիկներն էին տպել. «Այսօր Երևանից յատուկ գնացքով տեղս ժամանեց Հայաստանի խնամատարութեան և աշխատանքի մինիստր՝ ընկեր Սահակ Թորոսեանը, որը մասնակցելու է մայիսի 1-ի տօնակատարութեանը»։

Եւ անա այդ մինիստրը կանգնում է պատշգամբում և ամբոխի առաջ արտասանում իր այն ճառը, որը ոչ մի պատիւ չի կարող բերել իրեն յարգող և իր հայրենիքի արժանապատուութիւնը բարձր գնահատող ոչ մի քաղաքացու, ուր մնաց որ մինիստրի։

Կարկտի պէս թափուում են պատշգամբից բթացած ու վաղուց արդէն խունացած յեղափոխական անժամանակ լոզունգները, թիթեռնիկների պէս դողդողում են օդում պէս-պէս գոյների թերթիկները, շարժելով անցեալի անմռայ ու տխուր յիշողութիւնները... Մինիստրը խօսում է.

«Բաղդաւոր եմ, որ այսօր Հայաստանի կառավարութեան կողմից կարող եմ շնորհաւորել հայ բազմաչարչար աշխատաւորութեան ոսնը, այն աշխատաւորութեան՝ որը միշտ իր արիւն-քրտինքով դատել էր և կերակրել հայ մնանկացած բուրժուազիային»...

— Կորչի՞ բուրժուազիան...— գոռում է ամբոխը մի մաուզերաւոր ուսանողի թելադրանքով։ Եւ բուրժուազիան իսկոյն կորչում է։ Հռետորը շարունակում է.

— «Մենք գնում ենք դէպի ինտերնացիոնալը, դէպի հաներաշխութիւնը բոլոր ազգերի հետ և այդ մենք կատարելու ենք ազգային ճանապարհով։ Բայց մեր բուրժուազիան ազգային է, նա հեռու է մեր ժողովրդի ցաւերից ու հոգսերից»...

— Կեցցէ՞ հայ աշխատաւորութիւնը... գոռում 14—15 տարեկան երեխաներից և զառամեալ ծերունիներից կազմուած յեղափոխական մասսան և մոռանալով մինիստրին էլ, հայ աշխատաւորութիւնն էլ վազում է դէպի Հայ Ժողովրդական Կուսակցութեան Ակումբի պատշգամբը, որտեղից թափուում են մայիսի մէկի առթիւ տպուած վարդագոյն թռուցիկներ...

— Ի՞նչ էք անում, ես ձեր... և այլն, աղաղակում են մաուզերաւոր ուսանողը և մի դաշնակցական միլիցիոներ, և մտնելով երեխաների խմբի մէջ խլում և պատառոտում են ժողովրդականների թռուցիկները։

Ողորմելիներ։ Մթթէ չէք հասկանում, որքան ծիծաղելի էք։ Եթէ այդ է ձեր հաւատարիմ յեղափոխական մասսան, լաւ չէ՞ր լինի, որ նա բոլորովին չլինէր։

Դանդ մենակ մնացած ու շուարած մինիստրին։

«Մի՛այն ի նկատի առնելով մեր հայրենիքի անհորմալ ու ծանր կացութիւնը, մենք ստիպուած եղանք կառավարութեան կազմի մէջ հրաւիրել հայ բուրժուազիայի ներկայացուցիչներին»։

Մինիստրը չի հասկանում երևի թէ ինչ է խօսում։ Նա մոլորուել է։ Եթէ դաշնակցականները հայ ժողովրդի համար միայն բարիք են ցանկացել և այդ նպատակին հասած լինելու համար «հայրենիքի անհորմալ ու ծանր կացութեան» բոպէին հայ «բուրժուազիային» են դիմել, երևի այդ արել են այն հաստատակ պատճառով, որ գիտցել են որ վերջինս օգտակար կարող է լինել, որպէս օգտակար ոյժ։ Իսկ ի՞նչ է խօսում «ընկեր» Թորոսեանը։ Եւ վերջապէս թոլատրելի՞ է արդեօք, որ իրեն յարգող մինիստրը ամբոխի առաջ այսպիսի ամբոխավարական ճառ արտասանի։ Մարդ ո՞րքան պիտի կուրանայ, որ չկարողանայ կուսակցամոլական ագիտացիան պետական-քաղաքական գործունէութիւնից զատել։

«Ցօնակատարութիւնը» վերջանում է։

Ամբոխը ցրւում է անորոշ տրամադրութիւններով հատակուած։

Երեկոյեան դէմ անցնում եմ փողոցով։ Մօտենում է ինձ մի ալէքսանդրապոլցի և հարցնում.

— Էսի՞կ էր քաղաքային ընտրութիւնները։

— Ոչ, ասում եմ զարմացած և ժպտալով։

— Հը էսիկ ի՞նչ էր, ի՞նչ զաուլ-զուռնա էր։

— Մայիսի մէկն էր, աշխատաւորութեան տօնը։

— Հը ընչի՞ էսոնք կը բաժնէին։ Հանում է գրպանից մի ծրար, որի մէջ գրած է Դաշնակցութեան № 2 բիւլլետենը։

Սկսուել են ուրեմն զեղծումները։

Հաւաքել են ամբոխ, խօսել անմիտ բառեր ու ճճռան ճառեր և ի միջի այլոց տեսել են իրենց ընտրական պայքարի գործը։

Եւ յետոյ պիտի ասեն, որ յաղթեցին, որ ժողովրդականութիւն են վայելում, որ արմատներ ունեն և այլն, և այլն։

Բացատրելով խօսակցիս թէ ինչ պիտի անել, վերադառնում եմ տեղնեակս, մտաբերելով օրուայ յեղափոխական տպաւորութիւններս ու նորէն զառնացած կրկնում եմ.

«Ե՞րբ պիտի գայ իսկական օրը»։

Եւ գալու է արդեօք նա մեր թշուառ ու խաւար ժողովրդի համար...

Տիգրան Հախումեան

Ալեքսանդրապոլ
2 մայիսի 1919 թ.

ՄԱՄՈՒԼ

«Գրուզիան» շեշտելով, որ իրականութիւնը չարդարացրեց այն յոյսերը, որոնք կապուած էին անգլիացիների Կովկաս գալու հետ, պնդում է, որ նրանց դիրեկտիւները ոչ միայն չէին աջակցում երկրի խաղաղացման, այլ ընդհակառակը, առաջացնում էին փոխադարձ անջատումն և ընդհանուր զայրոյթ։ Լրագիրը հասկանում է, որ

Սեփական միջոցներով, առանց դրսի օգնութեան, Կովկասեան ժողովուրդները դժուար կարող են ապրել։ Բայց այդ օգնութիւնը պէտք է բարեացակամ լինի, հիմնուած տեղական ժողովրդի փոխադարձ հաւատի և կենցաղի ու քաղաքական ինքնուրոյն իրաւունքի լիակատար իրականացման վրայ, առանց որևէ հարստահարութեան։ Այդ պէտք է լինի, այսպէս ասած, կուլտուրական ոյժերի փոխադարձ գործողութիւն, ամեն տեսակ արժէքների նիւթական և հոգևոր փոխանակութիւն։ Եւ մեծ պետութիւններից ո՞ը կարող է մեզ այդ տալ։

«Գրուզիա»-ն յոյս է արտայայտում, որ

Իտալական հրամանատարութեան այստեղ գալուց յետոյ մեր մէջ կը սկսուի աւելի անկեղծ և աւելի նորմալ յարաբերութիւն։ Իտալիան աւելի քիչ է հետաքրքրուած մեր արևելեան այս կամ այն կացութեամբ և ցոյց է տալիս քաղաքական վարմունքի այլ գիծ, որպիսին աւելի մօտ կարող է լինել մեր առաջիկայ դէպքերի հասկացողութեանը։

ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐԵՐ

Գերման պատուիրակութեան ցոյցը հաշտութեան պայմանագրի դէմ։ Լուրեր Կամուրջական բանակի շրջանից։ Հայոց զօրամասերը Նախիջեւանում։ Ռուսական հարցը։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

—o—

ՈՍԿՈՒ ԱՂԲԻՒՐ

ՎԻՏԵԲՍԿ, 6 մայիսի.— Դրիսինի Գործադիր Կոմիտէն բուրժուազիայի վրայ նշանակեց 600,000 ռուբլի տուգանք։

ՍՏԵՖԱՆԻԿԻ ՄԱՀԸ

ՊԱՐԻԶ, 5 մայիսի.— Պրեսբուրգից հաղորդում են, որ չեխո-սլովակների հանրապետութեան զինուորական նախարար Ստեֆանիկը, Պրեսբուրգի շրջակայքում, երկու իտալական սպաների ընկերութեամբ կատարած զբօսանքի ժամանակ վայր ընկաւ սաւառնակից 400 մետր բարձրութիւնից և մեռաւ։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՕԿԿՈՒՊԱՑԻԱՆ

Մայիսի 12-ին Արբէջանի պարլամենտում սոցիալիստների ֆրակցիայի յարուցած «Անդրկովկասի օկկուպացիայի» հարցի առթիւ տեղի պէտք է ունենար կառավարութեան բացատրութիւնը։

ՀԱՅՈՑ ԶՕՐԱՄԱՍԸ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ

Թաւրիզից նոր եկող մի անձնաւորութիւն հաղորդում է, թէ մայիսի 6-ին Շախտախտի կայարանի մօտ նա տեսել է հայկական մի զօրամաս, որը Երևանից Նախիջևան էր գնում։ Զօրախումբը գնում էր Դրոյի գլխաւորութեամբ։ Զօրախումբը թողնում էր շատ գեղեցիկ տպաւորութիւն։ Նա գնում էր երաժշտախմբով կանոնաւոր շարքերով և օրինակելի քայլուածքով։

Զօրամասի նպատակն էր՝ գրաւել Հայաստանի սահմանները, աջակցել, որ փախստականները վերադառնան իրենց բնակավայրերը և կարգ ու կանոն պահպանեն Նախիջևանի շրջանում։

Շախտախտում պէտք է տեղի ունենար Նախիջևանի մուսուլման ազգաբնակութեան և Երևանի Հայոց Կառավարութեան պատուիրակների հանդիպումը։

(«Кавк. Сл.»)

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՊՈՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ռոստովի «Գ. իազ. Կրայ» ապրիլի 26-ի համարի մէջ տպագրուած է հետևեալ «Ֆրանսիական պաշտօնական հաղորդագրութիւնը».— Շատ հեռա-

գիր է ստացուած Ռոստովի ֆրանսիական դեսպան Գեմմերլուի անունով, Կամաւորական բանակի ֆրանսիական զինուորական միսսիայի ղեկաւոր կայանից։

Մնդրում եմ հերքել ամեն տեսակ լուրեր, որոնք վերաբերում են Ֆրանսիայի մէջ տեղի ունեցած փոփոխութիւններին թէ նրա կառավարական կազմի, թէ նրա դէպի Կամաւորական բանակը և Ռուսաստանն ունեցած քաղաքական վերաբերմունքի մասին։ Նախարարների խորհրդի նախագահ Կլեմանսոն, Դաշնակիցների լիուլի համաձայնութեամբ շարունակում է կռիւ մղել բոլշևիկների դէմ։ Ֆրանսիական զօրքերի Օդեսայից և Ղրիմից հեռանալը ամենևին չի նշանակում թէ Ֆրանսիան չի հետաքրքրուում Կամաւորական բանակի քաջութեամբ և որ նա մերժում է նրան օգնութիւն տալ՝ թէ բարոյական և զինուորական կողմից, որպիսին ցոյց կը տայ ապագան։

Գոլկոմիկ Կորբէյ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՎՐԱՑ ՀԵՌԱԳՐԱԿ. ԳՈՐԾ.)

—o—

Գերմանիան որոշել է պատասխանել խաղաղարար պայմանագրին

Բերլինից բոլոր հեռագիրները հաղորդում են, որ գերմանական կառավարութիւնը որոշել է պատասխանել Դաշնակիցներին։ Բերլինում և Ֆրանկ-Ֆուրտում բոլոր բոլորը փակուած են, արգելուած են բոլոր փակուած են մի ամբողջ շաբաթով։ Շեյդեմանի և Էբերտի վարմունքը օրինակ է դառնում բոլորի համար։ Շեյդեմանը ճառ կասի երկուշաբթի օրը Ազգային Ժողովում։ Կարծում են, որ կառավարութեան մի մասը կը բողոքի խաղաղ բարպայմաններն ընդունելու դէմ և այդպիսով ազդեցութիւն կը գործի միւս պետութիւնների վրայ յօգուտ Գերմանիայի։ Գերմանացիների ծրագրի մէջ է մտնում ներկայացնել հակա-պայմանագիր, որը հիմնուած է Վիլսոնի 14 կէտերի իրենց սեփական ժողովրդութիւնների վրայ։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՂՈՐԴ.

Քրանս - անգլիական սահմանագիծը

Համաձայն խաղաղարար պայմանագրի, Ֆրանսիան ստանում է Տագոն և Կամերունը՝ Անգլիայի հետ համաձայնութեան գալու պայմանով։ Այդ համաձայնութեամբը արդէն որոշուած է Ֆրանս-անգլիական սահմանագիծը, որը գնում է դէպի Զադի լեռնային շղթան, Աւելի մօտ։ Երկաթուղիներն անցնում են Ֆրանսիային։ Տոգոյի մասին տակաւին ֆրանս-անգլիական բանակցութիւններն աւարտուած չեն։

Գերմանացիների ցոյցը պայմանագրի դէմ

ԼԻՈՆ, 11 մայիսի.—Խաղաղարար կոնֆերանսին ներկայացրած ազգերի Լիգայի և Վիլսոնի 14 կէտերի գործադրութեան մասին տուած երկու հարցերի մասին Զորսի խորհուրդը պատասխանեց, թէ մտադիր է քայլեր անել յետ կանչելու Վերսալից Բրեկդորֆ Ռանցաուին, որպիսին առանձնապէս ցանկանում են բրիտանական պատուիրակները։ Գնդում են, որ գերմանական պատուիրակները ցոյց են կազմակերպել խաղաղարար պայմանների դէմ։

Բողոքներ պայմանագրի դէմ

Գերմանական ժողովրդի վրդովմունքը, ոպառնացող վտանգի պատճառով, հասել է իր ծայր սահմանին։ Բռնութեան դիմադրութիւնը այնքան ակներև է, որ սպասելի են խլրտումներ։ Ամեն տեղից գալիս են հեռաձայներ։ Ամեն տեղից գալիս են հեռաձայներ։ Ամեն տեղից գալիս են հեռաձայներ։ — «Կառավարութիւնն արդէն տեղեկութիւն ունի արևմտեան Պրուսիայի ազգաբնակութեան տրամադրութեան մասին և գերմանական ժողովուրդը պէտք է գիտենայ, որ մենք աւելի լաւ կը համարենք ոչնչանալ, քան թէ մեզ կը յանձնենք լեհական վրիժառու իշխանութեան շահագործման»։ Բոլոր յայտարարութիւնների մէջ պահանջում են, որ նման խաղաղութիւնը չընդունուի։

—

ՊԱՐԻԶ, 10 մայիսի։ Վերջնականապէս որոշուած է, որ կոնֆերանսը ռուսական հարցը չէ քննելու, այլ, եթէ կարևորութիւն լինի, յանձնուելու է Լիգային։

—

Դիրքի կարծիքը պայմանագրի մասին

ՆԱՈՒԷՆ, 11 մայիսի.—Գրուսական Լանդտագի մայիսի 8-ի նիստում նախագահ Դիրշը, քննելով մեծ հորիզոն։ Կէս դիշերը հազիւ էր անցել, որ խաղաղ եղանակը փոխուեց։ Վերկացաւ թեթև քամի և ցուրտը դառաւ խիստ զգալի։ Ոչ մի բան չկար կրակ անելու՝ փոքր ինչ տաքանալու համար։ Մենք զինեցինք մեր համբերութիւնը մի կերպ այդ ցուրտ գիշերն անցկացնելու, ապա առաւօտեան, արևի առաջին ճառագայթներն երևալուն պէս շարունակել մեր ճանապարհը դէպի Ս...

Մայիսեան դիշերը երկար չքաշեց։ մեր սպասածից աւելի շուտ երկինքն սկսեց շառագունել և լեռների կատարները իրենց թիկունքում առաջ եկող արևի լոյսի տակ սկսեցին ուրուագծուել զենիթի մէջ։

Մենք սկսեցինք դիտել, թէ ինչպէս մթութիւնը տեղի էր տալիս աղջամուղջին, ինչպէս ստուերներն իրենց փեշերը հետզհետէ հաւաքելով, թաք էին կենում երկրի խորքերում, ապա այնտեղից ևս անհետանում։

Երկնակամարից վարդագոյն ճառագայթները կամաց-կամաց քաշւում էին ներքև, դէպի երկիր, և վերացնում էին նրա երեսին նստած մշուշապատ քողը։ Սևով պատած երկիրն սկզբում ստանում էր մուգ-մաւի գոյն, ապա կանաչին տալիս, և ապա ցուցնում այն բնական ճամուկը, որ հիւսել էին իրար հետ խոտերն ու ծաղիկները, նոր բռսած կանաչաւուն տրտերն ու հայելի ներիպէս փառուած լճակները. դա կարես մի ահագին զորդ լինէր, մի անհերևոյթ ձեռքով փռուած Ջաւախքի երեսին, որ իր գեղաձիծաղ դէմքով խայտում էր վարդերով հրդեհուած երկնքի երեսին։ Ծովը մեղմ տատանում էր զալար բուսականութիւնը և կասես ինչ-որ դիւթական հէքիաթ փոփսում նրա ականջին։

Հազիւ էր երկրի երեսը ազատուել մշուշապատ խաւարից, որ Աբուլի ձիւնապատ գագաթն սկսեց դալուկ գոյն ստանալ. դա երկար չքաշեց, դալկութիւնը տեղի տուեց վարդագոյնի, որ հետզհետէ շառագունելով յանկարծ սկսեց մի քանի կէտերում առկայծել ինչպէս ագատանդի կտորներ. փայլի հետ շառագունեցին կատարի վերևի մասերը արևի առաջին ճառագայթների տակ և ոսկու գոյնով պատուեց հսկայ լերան գագաթը. Աբուլը քիչ յետոյ հագաւ, կասես, հազար ու մի ջնջուլներով շարուած ծիրանի, որը քանի գնաց՝ իջաւ ներքև և ընդգրկեց լերան ամբողջ կէսը։ Աբուլը կասես այդ ժամանակ մի շաքարի գլուխ լինէր՝ նստած այդ զգեստի մէջ այնքան վեհափառ, այնքան դիւցազնական...

— Օխսաչ,—յանկարծ դուրս թռաւ ընկերոջս կրծքից — ճրքան լաւ է, ճրքան գեղանի...

Մենք տակաւին այդ հիացմունքի մէջ էինք, որ մեր շներն սկսեցին հաչել և մեզ իմաց անել օտար անձերի ներկայութիւնը։ Ուշադրութիւններս դարձրինք դէպի լերան ստորոտը, որտեղ խոտերի տակ, հազիւ նշմարելի հոսում էին մի քանի առուակներ, սկիզբն առնող այնտեղի ակունքներից, և տեսանք լերան լանջին այդ ակունքների մօտ մի քանի մարդիկ, որ յաճախակի կռանալով ինչ-որ բան էին հաւաքում։

Մեղմ սուլոցով մօտ կանչեցինք մեր որսկաններին և սկսեցինք դիտել ներքև։

Շրջողները մի խումբ դիւղական երիտասարդներ էին, որոնք հապճեպով ծաղիկներ էին հաւաքում և փնջեր կապում։ Մօտեցանք հարցնելու՝ թէ ո՞ր կողմով էր անցնում դէպի Ս... տանող ճանապարհը։

Ակունքները, որտեղ երիտասարդները հաւաքում էին ծաղիկներ, համարեա ծածկուած էին մի տեսակ մաւ-կապտագոյն ծաղիկներով, որոնք իրենց փնջաձև գլուխները անդադար օրօրում էին կանաչաւուն ցողունների վրայ և մի աքանչելի բուրմունք տարածում շուրջը։ Մենք հիացած այդ ծաղկով հարցրինք՝ ինչ ծաղիկ է այդ, որից այդքան շատ են հաւաքել, և ինչու համար են հաւաքում։ Նրանցից մէկը, որ աւելի հասակաւոր էր, գանգուր մազերով, շէկ դէմքով, մօտ քսան տարեկան երիտասարդ, այսպէս սկսեց.

— Ասում են, ամեն տարի հենց որ Համբարձման դիշեր է լինում՝ ծաղիկները լեցու են առնում, իրար հետ խօսում, իրար ասում, թէ ո՞րը ինչ ցաւի տեղ է, ինչ դարդի դարման. և որպէս զի իմանաս, թէ ո՞րը ինչ է ասում՝ հարկաւոր է թաց կենաս, որ ծաղիկները քեզ չնկատեն, թէ իրենց մօտ ինսան (մարդ) կայ, ուշի-ուշով ականջ դնես նրանց խօսակցութեան, հասկանաս։ Հենց որ կէս դիշեր է լինում, Ասածու հրամանով նրանց լեզուն բացւում է, նրանք սկսում են իրենց դաղտնիքը մէկզմէկու ասել մթութեան մէջ, թաքուն (դրա համար Ասուած Համբարձման դիշերը մութ է ստեղծել)։ Նրանք մօտենում են իրար ականջի և զգոյշ, շատ զգոյշ փըսփսում... Այդ ժամանակ հարկաւոր է որ արթուն մնաս, ըմբռնես. մենք էլ էդ մտքով եկանք էստեղ, ողջ դիշերը չքնեցինք, թաք կացած, շնչներս մեզ պահած ականջ դրինք, համարեա լսեցինք դրանց փսփսոցը, սակայն ոչինչ չհասկացանք... երևի ծաղիկները նկատել են մեր ներկայութիւնը, շատ զգոյշ են խօսել, որ մենք ոչինչ չհասկանանք, ինչ-որ թախիծով հառաչեց նա և շարունակեց,—ասում են, որ ամեն մի հառարակ մահկանացու չի կարող հասկանալ նրանց լեզուն։ հա, դա մի տուրք է, որ երկնքից ընծայուած է եղել միմիայն Լոխման հէքիմին, և նա է միայն աշխարհիս երեսին իմացել ու հասկացել, որից յետոյ ծաղիկներն աւելի զգոյշ են դարձել, աւելի զգաստ, և հենց որ նկատել են ինսանի ներկայութիւն՝ էլ բարձը չեն խօսել... Դիտէք,—յանկարծ յարեց նա, կասես մի կարևոր բան ասուածութեան տալու պատճառով,—այսօր Համբարձում է. ծաղիկները հաւաքել ենք. տանենք, որ եղն ու դաբը նախշենք, Համբարձումն գանք, վիճակ հանենք...

— Համբարձում,—յանկարծ արտասանեցինք ես և ընկերս, յիշելով, որ արդարև այդ օրը Համբարձում էր և տեսանք, թէ ինչպէս միւս երիտասարդներն արդէն բոլոր ծաղիկները փնջած պատրաստուած էին վերադառնալու դիւղ։

Ընկերս, որի համար այդ կապոյտ ծաղիկը մի նորութիւն էր, հոտառելով հարցրեց, բայց դու չասացիր, թէ սա ինչ ծաղիկ է ու ինչ անուն ունի։

— Դա մի ծաղիկ է, որ լինում է միմիայն մայիսի մէջ, այն էլ աղբիւրների ակունքներին, անունն է հօրատ-մօրատ։

— Հօրատ-մօրատ,—հազիւ արտասանեցի ես, և ընկերս մտորման մէջ,—կասես դա ինչ-որ ծանօթ անուն լինի։

— Դա հրեշտակների անուն է,—մեր երեսին նայելով խսկայն յարեց գանգրահեր երիտասարդը։

— Հրեշտակների՞,—հարցրեց ընկերս։

— Այո, հրեշտակների։

Մենք հետաքրքրուեցինք այդ անունով և երեսներս ուղղեցինք դէպի լերան ստորոտը, որտեղ արևի ճառագայթներով ցողուած երևում էր Ս... գիւղը։

— Մենք կուշանանք,—խօսեց երիտասարդներից մէկը,—դուք Ս... էք գնալու, մեր ճանապարհն էլ դէպի այն կողմն է գնում. կուզէք միասին գնանք և թող Աղասին (այդպէս էր գանգուր մազերով երիտասարդի անունը) ձեզ ճանապարհին պատմէ։

Մենք, նրանց հետ, առաւօտեան շաղի միջով, մեր քայլերն ուղղեցինք լերան լանջով դէպի Ս...

Ե. Մալխասեան

(Կը շարունակուի)

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

—oo—

Վրաստանի կառավարութեան նաղորդագրութիւն.—Անգլիական բժիշկ Մագովանի սպանութեան շուրջը Վրաստանի հանրապետութեան թշնամիները բաշխում են ամենատհեթեթ և պրովոկացիոն լուրեր։ Այդ փոռան էլ ընդունուում է որպէս թշնամական գործունութիւն։ Վրաստանի կառավարութիւնը խորապէս ցաւելով այդ դէպքի համար, կրկին անգամ պնդում է, որ նա ամեն միջոց ձեռնարկել է ոճրագործներին ձերբակալելու համար։ Միևնոյն ժամանակ դատի են յանձնուած այն անձինք, որոնք պատասխանատու են ոճրագործների փախուստի համար։

◆ Միք. Արամեանը ազատուած.—Թիֆլիսի միլիցիոների ձեռք առած կարուկ միջոցների հետևանքով, մայիսի 14-ի դիշերը չարագործները գերութիւնից ազատել են Միք. Արամեանին։ Գերութեան մէջ մասնակցելու կասկածով ձերբակալուել են՝ նախկին միլիցիոներ Դաւիթ Ուրուշաձէն, Ռուբէն Շահպարոնեանը, Գեորգ Փիթոև և Սեդրակ Կուկուև. ձերբակալուել է նաև Արամեանին փախցնող աւտոմոբիլի շոֆերը։ Արամեանը տարուած է եղել Նախալովկայի շրջանը, ուր միլիցիապետի և նրա օգնականի ղեկավարութեամբ կատարուել է խիստ խուզարկութիւն, որի միջոցին գտնուել են բաւականաչափ զէնքեր։ Զարագործների հետապնդումը շարունակում է։

◆ Վիճակախաղը յետաձգուած.—Բարեգործական նպատակով Վրաստանում վիճակախաղ կազմակերպող մարմինը յայտարարում է, որ հաժաձայն խորհրդի որոշման՝ վիճակաղաղը 1918 թ. դեկտեմբերի 19-ից յետաձգուել էր մինչև ներկայ տարուայ մայիսի 1-ը, որպէսզի վարչութիւնը հնարաւորութիւն ունենար իր գործունէութիւնն ապահովել և տարածել նաև գաւառներում, բայց մի շարք անբարեյաջող հանգամանքների շնորհիւ տոմսակները դարձեալ չտարածուեցին և փոխանակ 3 միլիոնի տարածուել է միայն մէկ միլիոն ռուբլու տոմսակ։ Թէև այդ գումարով կարելի է սկսել վիճակախաղը, բայց այդքան գումարով հնարաւոր չէ նպաստել թատրոնին և հաժալսարանին, որովհետև վիճակախաղից ստացուած արդիւնքը շատ չնչին կը լինի, այդ պատճառով էլ որոշուել է վիճակախաղը վերջին անգամ յետաձգել մինչև առաջիկայ նոյեմբերի 2-ը։ Խորհուրդը յայտարարելով այս մասին յոյս ունի, որ հասարակութիւնը ժեծ հաժակրանքով կը վերաբերուի դէպի այս գործը և ամեն կերպ կաշխատի տարածել վիճակախաղի տոմսերը, որով և նպատատած կը լինի վիճակախաղ կազմակերպող վրաց բարեգործական ընկերութեանը, իր բարի նպատակներն ի կատար ածելու մէջ։

◆ Իտալական միսսիայի անդամները Լոմտատիձէի մօտ.—Վրաստանի Սահմանադիր Ժողովի նախագահի աւագ օգնական Լոմտատիձէին այցելեցին իտալական միսսիայի անդամները, որոնք երկարատև զրոյցից յետոյ ցանկութիւն յայտնեցին ներկայ լինել Սահմանադիր Ժողովի առաջիկայ նիստին։

◆ Մդդիեի արձակման տուրջը.—Արդարադատութեան մինիստրի օգնական Ա. Դ. Զափարիձէի կարգադրութիւնը՝ Թիֆլիսի դատաստանական պալատի աւագ նախագահ Մզդիևին իր կազմով պաշտօնից արձակելու մասին՝ յետաձգուել է արդարադատութեան մինիստր Ե. Գ. Գեգեչկորու կարգադրութեամբ։

◆ Նահանգական վարչութիւնները լուծուած.—Թիֆլիսի և Բուքայիսի նահանգական վարչութիւնները լուծուած են, իսկ նրանց կատարողները հեռացուած ընդհանուր հիմունքներով։

◆ Զեմստուոյին բնտրութիւնները.—Բորչալուի գաւառական զեմստուոյի իրաւասուների ընտրութիւնը տեղի է ունենալու յունիսի 8-ից ոչ ուշ։ Թեկնածուների ցուցակը շուտով կը հրատարակուի։ Գաւառը բաժանուած է հինգ ընտրական շրջանների—Շուլաւերի, Բորչալուի, Եկատերինենֆելդի, Բաշխիչէթի և Ծալկայի. ընտրող յանձնաժողովը գրանուում է Եկատերինենֆելդում։ Թեկնածուների ցուցակը պէտք է ներկայացնել մինչև սոյն թուի մայիսի 25-ը։

◆ Վրաստանի անկախութեան տարեդարձ. Վրաստանի Սահմանադիր Ժողովին կից կազմուած քաղաքական յանձնաժողովը, որ զբաղուում է մայիսի 26-ին Վրաստանի անկախութեան տարեդարձը տօնելու պատրաստութիւններով, որոշել է միօրեայ վրացերէն թերթ հրատարակել «Մայիսի 26-ը» անունով։

◆ Վրաց կառավարութեան որոշումներից.—Մերժել Փոթիի քաղաքային ինքնավարութեան միջնորդութիւնը՝ Փոթիի նաւահանդիստը նրա տնօրինութեանը յանձնելու մասին, նաւահանդիստը թողնել պետութեանը, որը գտնուելու է ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան տնօրինութեան ներքոյ։

— Հանրապետական հանրապետութիւնների մէջ կը քննուի Սոչիի հարցը։ Սոչիի և յանձնել արդարադատութեան մինիստրին։

◆ Կովկասեան նաւթային ջրերի մասին.—Մօտ օրերս Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում տեղի ունեցաւ կուրորտային բժիշկների և կուրորտային խնդրով հետաքրքրուող անձանց ժողով, ուր Ի. Ս. Ցկելաշուիլին զեկուցեց, որ Կովկասի հանքային ջրերից առայժմ չի կարելի օգտուել։ Զեկուցումից յետոյ տեղի ունեցաւ մրցաքերի փոխանակութիւն, ապա ժողովը որոշեց դիմել կուրորտային նախկին ընկերութեան պրեզիդիումին և խնդրել, որ նա ժողովի վրաւիրէ ընկերութեան բոլոր անդամներին և կուրորտային խնդրով հետաքրքրուողներին՝ քննութեան առնելու ընկերութեան վերակազմութեան և նրա գործունէութեան վերսկսման խնդիրը։

◆ Դեն. Տոմսոնի մեկնումը.—Դեն. Տոմսոնը իր սպայակոյտով ուղևորուեց Բաքուն, այնտեղից Անգլիա մեկնելու համար։

◆ Սկեռեցին պետութիւնից անջատելու տուրջը.—Վրաստանի ներքին գործերի մինիստրութեան կից, նախագահութեամբ մինիստրութեան գլխաւոր տեսչի Նանէյշուիլու կազմուել է մի յանձնաժողով, որը զբաղուելու է եկեղեցին պետութիւնից անջատելու խնդրով։

◆ Բաղաքի եկամուտները մինչև մայիսի 1-ը.—Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը մինչև մայիսի 1-ը հաստատել եկամուտներն է ունեցել. — Գանդակային տուրքից 76,500 ռ., կոնեակի և գինու վաճառքից՝ 1,933,000 ռ., առևտրաարդիւնաբերական հիմնարկութիւններից՝ 235,000 ռ., աւտոմոբիլներից՝ 155,000 ռ., սանիտարական տուրքից՝ 230,000 ռ., իսկ քաղաքի ծախսերը այս տարի 30 միլիոն ռուբլուց անցնում է։

◆ Հացթխարանների ծառայողների պահանջը.— Մայիսի 12-ին Թիֆլիսի հացթխարանների բանուորները իրենց ընդհանուր ժողովում ընտրեցին հացթխների սեկցիայի բիւրո և կազմակերպիչ յանձնաժողով, որը պէտք է ցուցակագրէ Թիֆլիսի հացթխների ընկերութեան բոլոր անդամներին։ Ապա ընկերութիւնը քննելով ծառայողների պահանջները, յայտարարեց, որ ինքը հրաժարւում է այն բաւարարելուց։ Այդ պատճառով առևտրա - արդիւնաբերական ծառայողների միութեան վարչութիւնը միջնորդութիւն յարուցեց աշխատանքի մինիստրութեան պաշտօնի միջոցներ ձեռք առնել ծառայողներին։

—

Աւստրիական սահմանները

Արտաքին գործերի հենդ նախարարներ վերջացրին Աւստրիական սահմանների որոշումը։

—

Աւստրիայի եւ Հունգարիայի սահմանները

Տասնի խորհուրդը քննում էր Աւստրիայի և Հունգարիայի սահմանները։ Երկուշաբթի, ցերեկայ ժամը 4-ին, հաւաքուեց նախկին Տասի խորհուրդը, որը կազմուած էր կառավարութիւնների և արտաքին նախարարութիւնների չորս գլխաւորներից՝ բարոն Մակենզիից և Անդրէ Տարտէյից, հողամասային հարցերի յանձնաժողովի նախագահից։ Այդ խորհրդաժողովին նպատակն էր՝ որոշել Աւստրիայի և Հունգարիայի սահմանները։

—

Գերմանացիների յայտագիրը

ՆԱՈՒԷՆ, 11 մայիսի։ Սպայում Դաշնակիցներին յանձնուեց հետևեալ յայտագիրը. — Ամերիկեան Գանցիգի լեհական պարենաւորման յանձնաժողովը մտադիր է հասցնել Լեհաստանին բացի պարենաւորումից նաև սանիտարական իրեր, աւտոմոբիլներ, ռեմինէ շիններ, կաբեմքենաներ, ժանուֆակտուրա, գործիքներ և այլն։ Գերմանական կառավարութիւնը բողոքում է դրա դէմ։ Գերմանական պետութիւնը պարտաւորուել է բաց թողնել դէպի Լեհաստան, Գանցիգի վրայով, միայն պարենաւորման մթերքներ, սակայն զինուորական մթերք, պայմանի համաձայն, թոյլատրելի չէ։

—

Աւստրիական սահմանները

Արտաքին գործերի հենդ նախարարներ վերջացրին Աւստրիական սահմանների որոշումը։

—

Աւստրիայի եւ Հունգարիայի սահմանները

Տասնի խորհուրդը քննում էր Աւստրիայի և Հունգարիայի սահմանները։ Երկուշաբթի, ցերեկայ ժամը 4-ին, հաւաքուեց նախկին Տասի խորհուրդը, որը կազմուած էր կառավարութիւնների և արտաքին նախարարութիւնների չորս գլխաւորներից՝ բարոն Մակենզիից և Անդրէ Տարտէյից, հողամասային հարցերի յանձնաժողովի նախագահից։ Այդ խորհրդաժողովին նպատակն էր՝ որոշել Աւստրիայի և Հունգարիայի սահմանները։

—

ՄԱՅԻՍԻ 26-Ի ՏՕՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հանրապետութեան մինիստրների ժողովի կոչը

Հանրապետութեան մինիստրների ժողովը կոչ է անում հանրապետութեան բոլոր քաղաքացիներին և յանձնել արդարադատութեան մինիստրին։

— Հանրապետութեան մինիստրների ժողովը կոչ է անում հանրապետութեան բոլոր քաղաքացիներին՝ մասնակցելու Մայիսի 26-ի տօնակատարութեանը։

— Հանրապետութեան մինիստրների ժողովը կոչ է անում հանրապետութեան բոլոր քաղաքացիներին և յանձնել արդարադատութեան մինիստրին։

◆ Կովկասեան նաւթային ջրերի մասին.—Մօտ օրերս Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում տեղի ունեցաւ կուրորտային բժիշկների և կուրորտային խնդրով հետաքրքրուող անձանց ժողով, ուր Ի. Ս. Ցկելաշուիլին զեկուցեց, որ Կովկասի հանքային ջրերից առայժմ չի կարելի օգտուել։ Զեկուցումից յետոյ տեղի ունեցաւ մրցաքերի փոխանակութիւն, ապա ժողովը որոշեց դիմել կուրորտային նախկին ընկերութեան պրեզիդիումին և խնդրել, որ նա ժողովի վրաւիրէ ընկերութեան բոլոր անդամներին և կուրորտային խնդրով հետաքրքրուողներին՝ քննութեան առնելու ընկերութեան վերակազմութեան և նրա գործունէութեան վերսկսման խնդիրը։

◆ Դեն. Տոմսոնի մեկնումը.—Դեն. Տոմսոնը իր սպայակոյտով ուղևորուեց Բաքուն, այնտեղից Անգլիա մեկնելու համար։

◆ Սկեռեցին պետութիւնից անջատելու տուրջը.—Վրաստանի ներքին գործերի մինիստրութեան կից, նախագահութեամբ մինիստրութեան գլխաւոր տեսչի Նանէյշուիլու կազմուել է մի յանձնաժողով, որը զբաղուելու է եկեղեցին պետութիւնից անջատելու խնդրով։

◆ Բաղաքի եկամուտները մինչև մայիսի 1-ը.—Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը մինչև մայիսի 1-ը հաստատել եկամուտներն է ունեցել. — Գանդակային տուրքից 76,500 ռ., կոնեակի և գինու վաճառքից՝ 1,933,000 ռ., առևտրաարդիւնաբերական հիմնարկութիւններից՝ 235,000 ռ., աւտոմոբիլներից՝ 155,000 ռ., սանիտարական տուրքից՝ 230,000 ռ., իսկ քաղաքի ծախսերը այս տարի 30 միլիոն ռուբլուց անցնում է։

◆ Հացթխարանների ծառայողների պահանջը.— Մայիսի 12-ին Թիֆլիսի հացթխարանների բանուորները իրենց ընդհանուր ժողովում ընտրեցին հացթխների սեկցիայի բիւրո և կազմակերպիչ յանձնաժողով, որը պէտք է ցուցակագրէ Թիֆլիսի հացթխների ընկերութեան բոլոր անդամներին։ Ապա ընկերութիւնը քննելով ծառայողների պահանջները, յայտարարեց, որ ինքը հրաժարւում է այն բաւարարելուց։ Այդ պատճառով առևտրա - արդիւնաբերական ծառայողների միութեան վարչութիւնը միջնորդութիւն յարուցեց աշխատանքի մինիստրութեան պաշտօնի միջոցներ ձեռք առնել ծառայողներին։

ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԵՐԵՒԱՆՈՒՄ

Հայ Ժող. Կուս. խորհրդակցութեան ապրիլի 29-ի 5-րդ նիստը

Ապրիլի 29-ի երեկոյեան կայացաւ Հայ Ժող. Կուսակց. խորհրդակցութեան V-րդ նիստը նախագահութեամբ պ. Կ. Գիւլնազարեանի և քարտուղարութեամբ պ. Լ. Մարկոսեանի։

Օրակարգն էր՝ 1) պ. Մ. Մալոյեանի զեկուցումը Հայ Ռամկավար Կուսակցութեան մասին և 2) պ. Յովհ. Ստեփանեանի զեկուցումը ներկայ ժամանակի մասին։

1) Պ. Մ. Մալոյեանը ընդհանուր կերպով ծանօթացրեց ժողովականներին այն հանգամանքների հետ, որոնց հետևանքով սկիզբ առաւ Հայ Ռամկավար Կուսակցութիւնը իբրև յաջորդ Արմենական հոսանքի, ներկայացրեց նրա գործունէութիւնը և արդի դրութիւնը։ Նա պատասխանեց իրեն տրուած հարցումներին և, ի միջի այլոց, այն միտքը յայտնեց, որ Հայ Ռամկ. Կուս. Երևանի ճիւղի անդամների կարծիքն է ձեռնպահ մնալ պարլամենտական ընտրութիւններին։ Այս վերջին կէտը տեղիք տուեց մտքերի փոխանակութեան և համաժողովում ցանկութիւն յայտնուեց հրաւիրել մի առանձին խորհրդակցութիւն մեր կոմիտէի և Ռամկավարների կողմից նշանակուած ներկայացուցիչներից, այդ խնդրի առթիւ։

2) Յ. Ստեփանեանը զեկուցեց ընթացիք մոմենտի մասին. զեկուցանողը կանգ առաւ արտաքին և ներքին յարաբերութիւնների վրայ, համառօտ կերպով ընդգծեց այն ուղին, որ մեր ժողովուրդը անցել է վերջին տարիները, համաշխարհային պատերազմի ընթացքը և հետևանքները Կովկասեան զօրաճակատում, Ռուսական յեղափոխութեան ծագումը, զարգացումը և վերջը ձախորդ ընթացքը պարզեց այդ երկու խոշոր քաղաքական գործօնների ազդեցութիւնը մեր վիճակի վրայ, կանգ առաւ Ցրաշիզոնի բանակցութեան և Բաթումի դաշնագրի վրայ, Անդրկովկասի նորածին հանրապետութիւնների համեմատական տեսութիւնն արաւ, շեշտեց հարևանների և առանձնապէս Վրաստանի հետ բարեկամական կապեր հաստատելու անհրաժեշտութեան վրայ, լուսաբանեց մեր հանրապետութեան 10 ամսուայ ընթացքում ունեցած կեանքը, միացեալ և անկախ Հայաստանի հեռանկարը, մեր յարաբերութիւնները Դաշնակիցների, Ռուսաստանի և մահմեդական ազգերի հետ և վերջում եզրակացրեց որ Հայ Ժողովրդական Կուսակցութեան վրայ ընկնում է պարտականութիւն արտաքին աշխարհի հանդէպ պաշտպանելու մեր Ժողովրդի բովանդակ շահերը միացեալ և անկախ Հայաստանի իրականացման նպաստել և ելնելով մեր անկախութիւնից ձգտել մեր ներքին կեանքում ամրապնդել պարլամենտական կարգերը, իրաւակարգի, օրինականութեան հիմունքներ. զեկուցողը գտաւ որ այդ ուղղութեամբ պիտի գործեն մեր կուսակցութեան մարմինները, մամուլի օրգանները և անդամները։ Զեկուցումից յետոյ տեղի ունեցաւ մտքերի փոխանակութիւն։

Ապրիլի 30-ի 6-րդ նիստը

Նիստը կայացաւ պ. Կ. Գիւլնազարեանի նախագահութեամբ և պ. Գ. Ղափանցեանի քարտուղարութեամբ. պ. Տէր-Մաչատրեանը զեկուցեց պարլամենտի ընտրութիւնների մասին. նա պարզեց գոյութիւն ունեցող օրէնքները, հրահանգները, ընտրական սխեման, ընտրութիւնների տեխնիկական կազմակերպութիւնը և այն ժամանակցութիւնը, որ պիտի հանդէս բերի մեր կուսակցութիւնը. զեկուցումը առաջ բերեց մտքերի փոխանակութիւն, որին մասնակցեցին պ. պ. բժ. Ղափանցեան, Մ. Մանուէլեան, Յ. Ստեփանեան, Տէր-Մարտիրոսեան, Կ. Գիւլնազարեան, Ա. Տէր-Գէորգեան և ուրիշներ։

Խորհրդակցութեան փակումը մայիսի 1-ին

Մայիսի մէկի նիստին ամփոփուեց խորհրդակցութեան կատարած աշխատանքները և հրաժեշտի ջերմ խօսքեր ասացին կենտրոնական մարմինների կողմից Կ. Գիւլնազարեան և Յ. Ստեփանեան, իսկ գաւառական ներկայացուցիչներից ինժ. Խաչատրեան, բժ. Ղափանցեան։

յողների պահանջները բաւարարելու համար։

◆ Ռազմագերիների համար.— Վրաց կառավարութիւնը որոշել է զինուորական մինիստրին թոյլ տալ որ ռազմագերիներին յատկացրած դեմարի մի մասը գործադրել արդէն վերադարձած ռազմագերիների կարիքների համար։

◆ Թաղման համար.— Վրաց կառավ. զինուորական մինիստրի արամադրութեան տակ է դրել 20,000 ռ. զինուորականներին թաղելու ծախսերը հոգալու համար։

◆ Զրի ուսումն. — Վրաստանի ժող. լուսաւորութեան մինիստրութեան կարգադրութեամբ այն ուսուցիչների երեխաները, որոնք 10 տարի ուսուցչական պաշտօն են վարել միջնակարգ դպրոցներում, ձրի սովորելու իրաւունք են ստանում։

◆ Անդրկովկասեան համալսարան.— Անդրկովկասեան համալսարանի պրոֆեսորների խորհուրդը ձայների ճնշող մեծամասնութեամբ մերժելով համալսարանը Բագու տեղափոխելու խնդիրը և միևնոյն ժամանակ նկատի առնելով այն հանգամանքը, որ ներկայ պայմաններում չի կարելի առաջիկայ ուսումնական տարում տպահովել նրա գոյութիւնը, որոշեց բոլոր մասնաճիւղերին և հողաբարձական կոմիտէին յանձնել համալսարանը Թիֆլիսում թողնելու համար միջոցներ ձեռք առնելու խնդիրը։

◆ Ձերբակալուած սպանողներ. — Ձերբակալուել են ժուրնալիստ Գ. Մ Պաւլովի սպանութիւնը կատարող երկու միլիցիոներներ։

◆ Խոսքի կոդոպուս. — Մայիսի 12-ին Սիօնսկայա փ. № 6 տանն ապրող Կ. Շապեանի բնակարանը մտնելով երկու զինուած չարագործներ մահուան սպառնալիքի տակ տարել են թանգարժէք իրեր և Նիկոլաեան արծաթ և թղթադրամ, որի գումարը հասնում է 50,000 ռ.։

◆ 5,100 հայ տարագրեալների օգնին.—Բոլգարահայ պատուիրակներ Դոստիկիան և Այբենան Օգեստայի Հայաստանի հիւպատոսի ժամանակաւոր պաշտօնակատար Պապովին յանձնել են յոգուտ Կովկասահայ տարագրեալների 5,100 ռուբլի։

Ա Ց Ս Օ Ր

Երեկ. ժամը 6-ին, Ն. Հ. Բ. Ընկ. տանը կը կայանայ Հայբենակցական Միութիւնների Կենտրոնական Խորհրդի նիստը։

ՅՕԳՈՒՏ ՍՈՎԵՏԱՅՆԵՐԻ

Խմբագրութիւնս ստացաւ Գիւա. ք. և Թամար Ադանեանցներից յիսուն ռուբլի և Յովսէփ և Նուարդ Գիւլեան Ցէր-Վարդանեանցներից յիսուն ռուբլի յոգուտ Հայաստանի սովեալների՝ իրենց սիրելի և անմոռանալի Լեոն Մելիք Փարսադանեանի վրայ պատկեր գնելու փոխարէն։

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Թէպէտ շատ վաղուց զգացւում էր Դոնի զօրքերի միութիւն հաստատելու կապը Կամաւորական բանակի հետ, բայց Դոնի նախորդ ատաման Կրասնովի անձնասիրութիւնը թոյլ չէր տալիս, որ այդ միութիւնն առաջ գայ՝ բոլշևիկների դէմ կռուելու համար։ Բայց երբ Դոնի զեկավար շրջաններն էլ համոզուեցան, որ այսօր չէ վաղը բոլշևիկների կուռ զօրութեան առաջ պիտի ջախջախուեն իրենք էլ, ժողովուրդն էլ, մանաւանդ երբ կոզակ զօրքերը սկսեցին ամբողջ գունդերով անցնել թշնամու կողմը, այլև ժամանակ չկար սպասելու,—Կրասնովն ընկաւ և նրա տեղ ընտրուեց Բագաևսկի, որ ջերմ կուսակից էր Կամաւորական բանակի և Թերեքի ու Կուբանի զօրքերի հետ միացած, մի ընդհանուր Ֆրոնտ կազմելու և մի ընդհանուր հրամանատարութեան տակ կռիւ մղելու գաղափարին։ Եթէ այդ խնդրի լուծումը մի փոքր էլ ուշացած լինէր, արդէն ամեն ինչ կորած էր։ Սակայն այսօր Դենիկինը, որպէս ընդհանուր հրամանատար, Եկատերինոդարից կարգադրում է և հակա-բոլշևիկեան զինուած բանակները յատուկ և օրհասական կռիւ են մղում բոլշևիկների դէմ։ Այսօր բոլշևիկները բաւական ընդարձակ կիսաօղակով շրջապատել են մեզ՝ սկսած Մարիուպոլից մինչև (Դերբենտից և Ցարիցինի վրայից) Վելիկոկնեաժսկ, որը մօտ 175 վ. հեռու է Ցիխարեցկի կայարանից։ Եթէ այդ կայարանին էլ տիրեն, Եկատերինոդարը բոլորովին կտրուած կը լինի մեզանից։ Հաւանօրէն այդ բանը կարող չէ տեղի ունենալ, քանի որ Նովորոսիյսկը (և Եկատերինոդարը) այն գլխաւոր յենակէտն է, որտեղից Դաշնակիցները մեր կռուող ոյժերին մատակարարում են ամեն տեսակ ռազմամթերք՝ տանկիներ, թնդանօթներ, գնդացիրներ, հրացաններ, ռումբեր և գնդակներ. ըստացուած է այնքան ռազմամթերք, որ ժամանակը չէ ներում նաւերից դատարկել ու վագոնները բեռնել։ Երկրում ամեն տեղ ընդհանուր զօրաժողով է. համալսարանի և կուրսերի ուսանող-ուսանողուհիք կանչուած են ռազմական ծառայութեան։ Ռոստովում և Նախիջևանում չկայ փոքր ի շատէ խոշոր շինութիւն, որ դրաւուած չլինի հիւանդանոցների և այլ կարիքների համար. այս օրերս գրաւեցին նաև հայոց աշխատանքի տան հսկայական շինութիւնը՝ ամենակարճ միջոցում սարքելով դատարկել նկ. Հոգաբարձութիւնը, Հայ Համայնքը, մանկապարտէզը, Հայկ. Կոմիտէն և այլ հաստատութիւնները, որոնք զետեղուած էին այդ շինութեան մէջ։ Իսկ հիւանդանոցների կարիքը մեծ է, որովհետև չափազանց մեծ է նաև հիւանդների թիւը—բծաւոր տիֆը, աւելի չափերի է հասել. վախճանուեցան երկու պրոֆեսոր (Վեխով և Պոժարիսկի), երրորդը հիւանդ է, հիւանդ են բոլոր ուսանող-ուսանողուհիները, որ կոչուած են կռուելու այդ սկարութեան դէմ, հիւանդ են շատ բժիշկներ, ի միջի որոնց և մեր հասարակական գործիչ բժ. Անդ. Սալթիկեանը, որը, սակայն, բարեբաղդաբար, առողջանում է։ Հիւանդութեան տարածմանը նպաստում են շարունակուող ցիտագին եղանակները։

Ընդհանուր զօրահաւաք թէպէտ հրատարակուած է և համարեա ամենայն օր շուրջկալներ (облава) են կատարւում, բայց և այնպէս շատերը խուսափում են ներկայանալուց զինուորական ատեաններին, չնայելով, որ դասալիքներին ժամուան պատիժ է սպառնում։ Դասալիք են լինում մեծ մասամբ ոչ կոզակ գիւղացութիւնը. և նա իր այդ վարմունքն արդարացրուած է նրանով, որ Դոնի զօրքերի երկրում եկուոր գիւղական և այլ տարրերը չունեն այն իրաւունքները, որ տրուած է կազակներին՝ երկրի կառավարութեան և հողատիրութեան մէջ։ Գիւղական տարրը խոյս է տալիս զինուորագրութիւնից նաև այն պատճառով, որ տանը հանգիստ է և... անընդհատ հարստանում։

Բնականաբար զինուորագրութեան ենթակայ էին նաև տեղի համալսարանի հայ ուսանողութիւնը, որի մի բաւական խոշոր մասը, մօտ 80 հոգի, տեսնելով, որ ուսանելու հնարաւորութիւն չէ ունենալու, թոյլտուութիւն ստացաւ իրը սանիտարներ ուղևորելու Հայրենիք կամ Կիլիկիա. դրանց մէջ էին նաև մօտ 6 հոգի տեղացիներ, որոնք արդէն մի անգամ արձագանգ տալով Կովկասից եղած կոչերին, ուղևորել էին Հայրենի երկիրը թշնամիների դէմ պաշտպանելու համար և... յուսախաբ ու յուսաբեկ վերադարձել յետ։ Երանի թէ նրանց գէթ այս անգամ իրենց ոյժերին համապատասխան գործի դնէին և նրանց երիտասարդական ամենասուրբ զգացմունքները չխորտակուէին։

Լուրեր Նոր-Նախիջեւանից

Թէպէտ տեղիս հայ բնակչութեան ցանկութիւնն էր առանձին առաջնորդութիւն հաստատել Ն. Նախիջևանում, բայց Վեհ. Կաթողիկոսը ի նկատի առնելով երկրի անկայուն և յեղեղուկ վիճակը, բարւոք է համարել առայժմ մեր թեմը թողնել իր նախկին սահմաններում և կարգել թեմի կառավարիչ Մուշէ վարդապետին, իսկ Ն. Նախիջևանի փոխանորդ Յուսիկ վարդապետին. երկուսն էլ յայտնի են մեր հասարակութեանը։ Լուսաւորչի ծնունդի օրը այդ տոթիւ ուղարկուած կոնդակները հանդիսաւոր կարդացուեցան մայր եկեղեցում, որից յետոյ Տ. Մուշէ վ-ը մի սրտառուչ քարոզ ասաց, որի միջոցին շատերը արտասուեցան՝ լսելով ազատ Հայաստանում մահուան ազատօրէն գործած նախճիրները։

— Տեղուս կայ կազմուած հայ համայնք, որ իր մէջ պէտք է ամփոփէր ամբողջ տեղիս (քաղաքի) հայութիւնը իր լրութեամբ։ Նրա սկզբնական սահմանադրութիւնը շատ ընդարձակ էր. բայց տեղական կառավարութեան տրամադրութեան և ուղղութեան անհամապատասխան լինելով դա, սեղմուեցաւ և դարձաւ մի տեսակ սահմանափակ իրաւունքներով մի հասատութիւն, որ ներկայումս զբաղուած է համարեա թէ միայն հայերից տուրքեր հաւաքելով և ուսումնարաններին օժանդակելով։ Ունի իր օրգանը՝ «Հայ Համայնք», որ շաբաթը մի անգամ է հրատարակւում։

— Տեղիս դպրանոցում և հայոց եկ.-ծխական դպրոցներում դեռ շարունակւում են դասերը. ուրիշ ոչ մի միջնակարգ դպրոց չկայ բացի. բոլորի շէնքերն էլ գրաւուած են։ Շուտով կը փակուեն նաև դպրանոցն ու միւս մեր դպրոցները։

Դպրոցական գործը բաւական խախուտ դրութեան մէջ է գտնւում մեզանում։ Յեղափոխութեան հետևանքով կազմուած ուսուցչական միութիւնը փորձեց իր ձեռքն առնել դպրոցների ղեկավարութեան գործը, բայց տեսնելով տիրող կառավարութեան կողմից վանդ, շտապեց դարձեալ մեր դպրոցների տէր հրատարակել Հոգևոր Իշխանութիւնը։

Տեղական լրագրներում հաղորդուած տեղեկութիւններից քաղուածօրէն հաղորդում եմ.

— Զուիցերիայի ներկայացուցիչը Պետրոգրադում, վերադառնալիս հայրենիք, Ստոկհոլմում յայտնել է, թէ Պետրոգրադում ժողովրդի հաղիւ մէկ երրորդ մասն է Ճաշել։ Սովետի կառավարութիւնը պատրաստ է ընդունելու Դաշնակիցների բոլոր պայմանները ևս, միայն թէ նրանք վերացնեն Ռուսիայի տնտեսական պաշարումը և վերանորոգեն քաղաքական յարաբերութիւնները։

Բոլշեւիզմը կազմալուծւում է

— Կամաւորների ձեռքն ընկած մի հրաման, որ հրատարակուած է բոլշևիկ զօրքի մէջ XIII-րդ բանակի, մասնաւորապէս 41-րդ դիվիզիայի հասցէին, պարզապէս ցոյց է տալիս, թէ ինչպէս կազմալուծւում է բոլշևիկների զօրքը։ 41-րդ գիվիզիան երբէք պատասխանատու գործեր չէ արել և ծանր դրութեան մէջ շարունակ լքել է իր դիրքերն ու «հանգիստ» խնդրել։ Եւ դրա շնորհիւ էլ ամբողջ XIII-րդ բանակը պարտութիւն է կրել Կամաւորական զօրքերից, որոնք սակայն թւով աւելի պակաս են եղել միշտ։

Դաշնակիցները Ռուսիայի նկատմամբ

— Սոյն տարուայ մարտի 2-ին (ն. տ.) Թէհրանիայում կատարուած դէպքերի առթիւ ֆրանսիական ծովակալը Սանտոպոլից ուղարկել է այնտեղ մի պատերազմական նաւ, որի նաւապետը յայտարարել է, թէ Դաշնակիցների ցանկութիւնն է, որ քաղաքում ու դաւառում կարգ ու կանոն լինի և նրանք երբէք չեն թոյլ տալ, որ իրենց հպատակները կամ իրենց հովանաւորութեան տակ գտնուողներից սեռ մէկը վնասուի։ Դաշնակիցները ոչ նպատակ ունեն Ռուսիայի սեռ մասին տիրելու և ոչ էլ կառավարութեան այս կամ այն ձևը մոցնելու, այլ նրանք միշտ պատրաստ են յարաբերութեան մէջ մտնելու կամաւորների բանակի կամ այլ ներկայացուցիչների հետ, միայն թէ պահպանուի յարգանք դէպի անձն ու նրանց կայքը։ Ռուսիան որոշ պարտաւորութիւններ ունի դէպի Դաշնակիցները և նա պարտաւոր է այն կատարել։ Մենք չենք թոյլ տալ որևէ անկարգութիւն և ամեն օր, որ որևէ վնաս կը հասցնի մեր հպատակներին կամ մեր հովանաւորութիւնը վայելողներին, մահուան պատժի կենթարկուի։ Մենք ունենք աչքեն միջոց սարքելու, որ մեզ յարգեն։

— Այս օրերս Ռոստով եկաւ «Պատուոյ Լեգիոնը» և երաժշտութեամբ ու վարչական բարձրաստիճան անձերի կողմից սիրալիր ընդունելութիւն ստացաւ կայարանում։ Այդ լեգիոնը կազմուել է Ֆրանսիայում և գտնուել է ամենակատաղի կռիւների մէջ։ Երբ Ռուսիայում ծագած յեղափոխութեան հետևանքով ռուսական ֆրոնտը քայքայուեց և Ֆրանսիան ընկաւ ամենածանր դրութեան մէջ, մանաւանդ երբ Ֆրանսիայում եղող ռուս զինուորների մի մասն ևս լքեց իր պաշտօնը, Ֆրանսացիք սկսան ամենայիրաւորական վերաբերմունք ցոյց տալ դէպի ռուսները։ Ահա այդ միջոցին կազմւում է Պատուոյ Լեգիոնը, որը մտնում է ամենակատաղի կռիւների մէջ իր կեանքով փրկելու ռուս մարդու պատիւը։ Նախ պատռում է Հինդենբուրգի ճակատի գիծը և գերի վերցնում թուով աւելի մարդ, քան թէ իրենք են։ Յետոյ Լեգիոնը գնում է Մեց, Էլզաս-Լորէն, Բաւարիա, իսկ ապա և Աթենք ու Կ. Պոլիս, ուր և ծառայում են։ Լեգիոնը երկու անգամ արժանացել է ամենարարձր զինուորական վարձատրութեան. խաչ՝ ձիթենու տերևով։ Պատուոյ Լեգիոնը եկել է այստեղ՝ կռուելու համար բոլշևիկների դէմ։ Առայժմ հանգստանում են. երբ այդ կառավարութեան ներկայացուցիչները փորձեր են անում խառնուելու մեր դպրոցական գործերին։ Թեմի կառավարիչ տ. Մուշէ վ.-ի ցանկութիւնն է գլուխ կանգնել այդ գործին և աշխատակցութեան հրաւիրել աշխարհականներին՝ կազմելով մի առանձին մասնաժողով տեղիս փոխանորդի նախագահութեամբ ու ղեկավարութեամբ։

— Հանգուցեալ Մ. Բերբերեանի յիշատակը յաւերժացնելու նպատակով կազմուում է հրատարակչական մի ֆոնդ՝ տեղիս հայ համայնքին կից։ Միտք կայ հաւաքել փոքր ինչ խոշոր գումար և ապա ձեռնարկել հրատարակութիւնների։ Առայժմ հաւաքուած է մօտ 25,000 ռուբլի։ Ցանկալի էր, որ հանգուցեալի յարգողները, որոնց թիւը խիստ շատ է նաև Կովկասում, նոյնպէս ձեռնարկէին հանգանակութեան և կազմուէր մի պատկառելի գումար՝ արժանի հանգուցեալ գործիչի անուանն ու յիշատակին։

— Շուտով պատրաստ կը լինի Դր. Զալխուշեանի կազմած «Красная книга»-ն՝ նուիրուած Հայոց խնդրին. Գրուած է շատ կենդանի լեզուով ու վառ գոյներով։ Զարմանալի եռանդ ունի այդ մարդը գործելու, դրելու յոգուտ իր հայրենիքի։

— Կեանքը քանի գնում այսպէս էլ է թանգանում. հացի ֆունտն արդէն հասաւ 2 ռ. 50 կ.-ի, որ Կովկասի վերաբերմամբ էժան է ի հարկէ, բայց այստեղի համար շատ թանդ։ Շաբաթը 60—75 ռ. է ֆունտը, թէյը՝ հազուադէպ։ Այժմ թէյի փոխարէն գործ են ածում պղպի թէյ—վեր են առնում օրինակ խնձորը, բարակ-բարակ մանրում ու կրակի վրայ չորացնում, կարմրացնում (աւելի սև քան կարմիրը) ու գործ ածում իբրև թէյ։ Կաթնով խմում են այդ թէյն առանց շաքարի նոյն իսկ։ Կարելի է նոյնպիսի թէյ պատրաստել նաև ուրիշ պտուղներից, նոյն իսկ խընձորի ծառի տերևներից, գաղաբից և այլն։

— Տեղիս ս. Խաչ վանքը թէպէտ ունի իր վանական կառավարութիւնը, որ բաղկացած է աշխարհականներից, բայց և այնպէս մտնուած էր անհոգութեան, որովհետև Հոգ. Իշխանութեան կարգադրութեամբ վանահայր Մուշէ վարդապետը երկու տարի է բացակայ էր այնտեղից (գտնուում էր Թիշնեում, ուր և Ցացեղ էր փակուած)։ Այժմ, երբ վանքի ժամանակաւոր կառավարիչ է նշանակուել Յուսիկ վարդապետը, պէտք է յուսալ, որ գործերը կարգի կընկնեն փոքր ինչ և վանքից կը հեռացուի ներկայ մթնոլորտը, որի մասին շատ-շատ բաներ են պատմում։

— Ղրիմի հայերն ևս, Ն. Նախիջևանի և Ռոստովի հայերի, կազմել են Հայ համայնք, որի մասին առանձին տեղեկութիւններ պահպանում ենք։ Մասնաւորապէս իսկ դէպքերի մասին տեղեկութիւններ։

«ԿՈՄԻՏԱՍ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վերջերս Թիֆլիսում կազմուել է այս անունով մի ընկերութիւն, որին անդամագրուել կարող է ամեն ոք, ում սրտին մօտ է հայկական երաժշտութիւնը յանձին Կոմիտաս վարդապետի։

Հայր Կոմիտասը այժմ գտնուում է Պարիզում՝ հոգեկան հիւանդների բուժարանում և կարիք ունի օգնութեան։ Բժիշկները յայտնել են, որ գեռ ամեն յոյս կորած չէ։ Մեր երաժշտագէտը դեռ կարող է ապաքինուել, եթէ լուրջ խնամք տարուի նրա վրայ։

Այս է նորակազմ ընկերութեան նպատակը, որ ի հարկէ արժանի է ամենայն համակրանքի։ Մեզանում առանց այն էլ շատ սակաւաթիւ են իսկական երաժշտագէտները, որոնց մէջ առաջին տեղը գրաւում է հայր Կոմիտասը. այս պատճառով էլ ոչ մի զոհողութեան առաջ կանգ առնելու չէ նրան փրկելու համար։

Ամսոյս 21-ին ընկերութիւնը տալիս է իր անդրանիկ համերգը։ Ամբողջ զուտ արդիւնքը պիտի փոխադրուի Պարիզ։ Համոզուած ենք, որ ոչ ոք չի զղջայ ներկայ լինելով այդ երեկոյթին, ուր երկսեռ քառաձայն խումբը երգելու է մեր երաժշտագէտի ամենաընտիր ներդաշնակութիւնները՝ մէջ ընդ մէջ տեղ տալով նաև փորձառու սոլիստներին։

ՀԱՅԱՍՏԱՆ

— Հանրային կրթութեան մինիստրութեան II շրջանի դպրոցների տեսուչ Գիւտ վարդապետը, ապրիլի 16-ին, Նոր-Բայազէտի ծխական դպրոցի դահլիճում, կազմակերպել է աշակերտական իրերի և ձեռագործների ցուցահանդէս։ Ցուցահանդէսին մասնակցել են՝ Ներքին Ախտայի, Ելենովկայի, Բասար-Քեչարի և Ղարանլուխի պետական տարրական և ծխական դպրոցների աշակերտութիւնը։ Ցուցադրել է ընդամենը 450 կոր իրեր, որոնցից փայտէ շինուածներ 162, կաւից 24, ձեռագործ 131, նկար 133։ Ներկայ են քաղաքի հասարակութիւնը, քաղաքագլուխը, դպրոցի վարիչները և զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչները։

ՎՐԱՑ ԹԵՐԹԵՐԻՑ

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ԳՆԱԼԸ

Վրաց թերթերը իրենց առաջնորդողներում յայտնում են իրենց կարծիքները անգլիացիների գնալու մասին Անդրկովկասից։

Սոցիալ-դեմոկրատների օրգան «Էրթոբա» թերթը այսպէս է գրում.

«Վրաստանի քաղաքական հորիզոնում սպասելի է նոր փոփոխութիւն։ Անգլիայի զինուորական հրամանատարութիւնը և զօրքը թողնում են Վրաստանի սահմանները և ընդհանրապէս Անդրկովկասը։ Ցայտնի բան է, որ գնալը չէ նշանակում այն շահերի բաց թողնելը, որ ունեն այստեղ Անգլիան և առհասարակ Դաշնակից պետութիւնները։

Այս գնալը այն էլ չի նշանակում, թէ Անգլիան չի ունենայ մեծ ազդեցութիւն մեր երկրի բախտի վրայ։

Այնուհետև թերթը իր եզրակացութիւններն է տալիս Անգլիայի ներկայութեան և գործունէութեան մասին այստեղ, Վրաստանում։

«Առհասարակ այն տէրութիւնները, որոնք ուզ դրին Կովկասում, թէև բաբեկամաբար էին վերաբերուում դէպի մեր երկիրը, բայց ոչ մէկը նրանցից չէր համակերպւում այն կարգերի և գործունէութեան հետ, որ ծնեց յեղափոխութիւնը։ Այս պատճառով ներքին ընդհարումներ ունեցան ինչպէս Գերմանիայի, այնպէս էլ Անգլիայի հետ, և, երևի, կունենայ նաև նոյն ոյժի հետ, որ կը փոխարինէ հինը։

Բայց և այնպէս այս ընդհարում-

ները լուրջ կոնֆլիկտների չեն փոխուիլ, որոնք կարող էին տեղի ունենալ միայն մեր ազատութեան, անկախութեան ոչնչացման դէպքում։

Վրաստանի դեմոկրատիան լաւ հասկանում էր, որ արտաքին ոյժի ներկայութիւնը մեզ մօտ չափազանց անհրաժեշտ էր մեզ վրայ յարձակուող շատ ագահ և անողորմ թշնամիների ժամանակ, որոնք սպառնում էին ոչնչացնել վրաց ազգի ֆիզիկական գոյութիւնը և յեղափոխութեան նուաճումները։ Վրաստանի դեմոկրատիան հաւատում էր, որ մեծ կուլտուրական պետութեան հետ, թէկուզ իմպերիալիստական, դաշն կապելը ևնրա հովանաւորութեան ներքոյ գտնուելը աւելի ձեռնտու է նրա ապագայի զարգացման և յեղափոխական շարժման ուժեղացման համար, քան այն վայրենի ուժի ներսխուժումը, որ անարխիայի և կողոպտման մթրկում կը խեղդէր նորածին հանրապետութիւնը։

Ո՛չ Գերմանիա, ո՛չ Անգլիա, և ո՛չ որևէ եւրոպական պետութիւն չի կարող սպանել պրոլետարիատի հոգին, որովհետև այս տէրութիւնները իրենց գոգում պարունակում են բանուորութեան դասի հզօր գունդեր, ուժեղ շարժումներ և հենց իրենց պետութիւնները անաբաժան են այդ շարժումներից։ Ուրեմն այս պետութիւնների հետ դաշն կապելը պերսպեկտիւում մեզ տալիս էր հնարաւորութիւն նրանց բանուորութիւն նրանց բանուորութեան դասի հետ մերձենալու այնպէս, ինչպէս Ռուսաստանի բանուորութիւն դասի հետ։

Անգլիական զօրքի ներկայութիւնն էլ այստեղ նոյնպէս աննշան և անօգուտ չի եղել մեզ համար։

Անգլիական զօրքը իմպերիալիստական զօրք էր, բայց մենք չենք ուզում սրանով ծածկել նրանց գալու օգտակար կողմերը։

Վրաստանի և հարևան հանրապետութիւնների դեմոկրատիաները գտնէ մի դաս առան անդլիացիների այստեղ մնալուց։ Այս այն գիտակցութիւնն է, որ հարկաւոր է միացեալ և ամբողջացեալ քաղաքականութիւն վարելը։ Անգլիային մենք հանդիպեցինք քայքայուած, միմեանցից բաժան-բաժան, և ամեն մէկը նրանցից աշխատում էր օտար ուժից օգուտ քաղել ի վնաս իր հարևանի։

Մի քանի ամսուայ փորձը մեզ ցոյց տուեց, որ մեր հանրապետութիւնների ոյժը կայանում է նրանց միութեան մէջ։ Անգլիան չվճռեց ոչ մի հարց, նա տուեց միայն միջոց մեր ինքնագործունէութեան համար և մի քայլ էլ արաւ մեր անկախութեան հաստատման ճանապարհին»։

Թերթը վերջացնում է յօդուածը այսպէս.

«Անգլիայի զօրքը այս օրերումս այստեղից գնում է։ Սակայն սրանով չի կարում ձգտումների այն թելը, որ միացնում էր մեր ժողովրդին այս ժողովրդի հետ, և առհասարակ Եւրոպայի լուսաւոր երկրների հետ։ Եւ այն սրտալի յարաբերութիւնները, որ սկսուեցին մեր ժողովրդի և Անգլիայի միջև, կը մնան իբրև ուղի Սև ծովի ափերի և Բրիտանական կղզիների մէջ»։

Սոցիալիստ-ֆեդերալիստների օրգան «Սախալիս Սաքէէ» թերթն էլ, ի միջի այլոց, հետևեալն է գրում նոյն հարցի մասին.

«Մենք տարաձայնութիւն ունէինք այստեղի անգլիական հրամանատարութեան հետ, երբեմն այդ տարաձայնութիւնը սուր կերպարանք էլ է ընդունել, բայց մենք միշտ յուսացել ենք այն տեղեկութեանց վրայ, որոնք եկել են Եւրոպայում գտնուող մեր ներկայացուցչութիւնից։ Մենք երբէք չենք կորցրել մեր յոյսերը, թէ քանի որ Անգլիայի կառավարութիւնը ճանաչում է Վրաստանի անկախութիւնը, հեշտ կը լինէր ընդհանուր լեզու գտնելը և մեր յարաբերութեանց բարւոքումն։ Մենք միշտ զանազանել ենք գեներալների քաղաքականութիւնը Լոնդոնի կառավարութեան քաղաքականութիւնից։

Ցաւմենայն դէպս մենք վերջնականապէս չգիտենք, թէ ինչ մեզ պատրաստում վաղուան օրը, ինչը առաջ բերեց այս փոփոխութիւնը։ Այս միայն պարզ է, որ այս երևոյթը ծայր աստիճան քաղաքական նշանակութիւն ունի։ Դեռ որոշ չէ, թէ ինչ ժառդութեամբ են գալիս իտալացիները։ Մի բան միայն ամենքի համար պարզ պիտի լինի։ Վրաստանը արդէն ձեռակերպուած պետական միութիւն է և այս մէկ տարին ցոյց տուեց, որ ով էլ դայ մեզ մօտ, նրան անխուսափելիօրէն պէտք կը դայ հաշիւ տեսնել կատարուած իրողութեան հետ և ոչ թէ կռիւ մղել, կամ կոնֆլիկտ ունենալ, այլ համաձայնութիւն կայացնել և յարգել մեր իրաւունքը, մեր ցանկութիւնը։ Ուստի հարկ է մեզ հանդիսաւոր շարունակել մեր պետական ստեղծագործութիւնը այն յուսով, որ Վրաստանը յաջողութեամբ և անվնաս դուրս կը գայ ամեն տեսակ փորձանքներից»։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽԱԲՐԻԿՆԵՐ ՁԱԻԱԽՔԻՑ

—

Ախալքալաքի գաւառի Սուլտա գիւղացի Դաւիթ Մերոյեանը, նախ անցեալ տարուայ գաղթը գիւղում, յայտնի «օջախի» տէր մարդ էր, օրական 5—10 հիւրեր օջախում հաց էր ուտացնում, խմացնում, մաքուր անկողնի մէջ պառկացնում և ճանապարհ դնում. որ թուրքը Զըղրից, Աղբարայից, Արդահանից, Դաւիթ տացուի հացը չեն կերել... երբ գալիս էին Սուլտա և իրենց տնային գործով, առևտրով անցնում Ախալքալաք։ Մերոյեանը ունէր մեծ քանակութեամբ կովեր, ոչխար, լծկան եզներ, փեթակ և ամեն բան. այս մարդը գաղթականական վիճակում ամեն ինչ կորցնում է, երբ Ծալկայից վերադառնում է երկիր, իր հետ տանում է միմիայն մի կով և մի զոյգ եզներ։ Իր հայրենի Սուլտա գիւղում երբ տեսնում է, որ ինքն և իր ընտանիքը սովամահ պէտք լինեն առանց հացի, մի լուծ եզն և միակ կովը վաճառում է թուրքերին և 20 փութ հաց առնում. թուրքերը կովն ու եզները ձեռք բերելուց յետոյ, գիշերը մտնում են խեղճ Դաւիթ տացուի տունը և կողոպտում կովի ու եզների գին 20 փութ հացը և հրացանի գնդակով վիրաւորում իր որդուն՝ Յովսէփին ոտքից, և անյայտանում։

— Տանկալ գիւղացի թուրք Մամիշը, որ յայտնի աւազակ էր մեր գաւառում, գալիս է Սուլտա գիւղը, խիստ կերպով պահանջում է նոյն գիւղացի Էգատ Արաջանեանից զէնքը (տրճանակ, հրացան) և արծաթեայ դրամները։ Էգատը, որ գիւղի մէջ յայտնի երիտասարդներից էր, թուրք Մամիշին պատասխանում է, որ ինքը զէնք և դրամ չունի։ Աւազակապետը իր ընկերներով սկսում է չլսուած տանջանքներ հացնել և ոտատիկ ծեծի ենթարկել. չկարողանալով տանել Էգատը այդ բարբարոսական տանջանքները, մի քանի օր հիւանդ պառկում է անկողնում և մեռնում, մի բազմանդամ ընտանիք թողնելով սովի ճիրաններին...

— Մայիսի 6-ին Թիֆլիս հասաւ Զամդուրա գիւղացի ուսանող Մ. Տ. -եանը։ Ջաւախքի սովը, գիւղացիների բնաջնջումը անչափ վատթար զոյներով է պատմում։

Ա. քահ. Բլրցեան

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏՈՒՄ

—

Մասսայական գաղթը Հայաստանի սահմաններից դէպի դուրս օրըստօրէ ստանում է ծաւալուն հանդամանք. այն ժամանակ, երբ հայկական կառավարութիւնը մտահոգուած է ներգաղթի հոգսերով, արտագաղթը սպառնական չափեր է ընդունում իր իսկ աչքի առջև։ Սոված ամբոխը յոյսը կտրած սկսել է աւարով ու կողոպուտով զբաղուել. մի իրականութիւն, որ անժխտելի լինելով հանդերձ՝ պէտք է կառավարական լայն զանգուածի ուշադրութիւնը գրաւէր, սակայն ինչ-ինչ պատճառները գալիս են միայն մատների արանքով դիտելու կատարուող այս վերիվարումները։

Ամբողջ գաւառում չկայ իշխանական մի հզօր թաթ, որի տակ հնազանդութիւնն օրէնք դառնար. այսպէս է Գեղարքունիքում։ Ամբոխն յուզուում է. յուզուում են նաև քաղաքական մեծաւորները, թաքնուում են՝ պարագլուխը հանդիսանում է կառավարական ներկայացուցիչը, իսկ առհասարակ կաշառակերութիւնն ու երկերեսութիւնը սրբագործուած դաւանանք է եղել Նոր-Բայազէտում հին օրերից սկսած։

Բժշկական օգնութիւնը կամայական է այն ժամանակ, երբ ստորին խաւերը կոտրուում են համաճարակներից. գեղերի գները հասնում են առասպելականի, անդամ անհրաժեշտութեան։

Մթերքները վաճառւում են հետևեալ գներով. սև հացը՝ 12 ռ., պանիրը՝ 30 ռ., իւղը՝ 70 ռ., ձուն՝ 2 ռ., հաւը՝ 50 ռ., միսը՝ ոչխարինը 12 ռ., տաւարինը 8 ռ. և այլն, գներ, որ չեն տարբերուում կենտրոնական քաղաքներից, որոնց համեմատութեամբ մեր շրջանը միշտ եղել է աննախանձելի ցածութեան վրայ։

Նոր-Բայազետցի

ԳՐԱԿ.-ԳԵՂԱՐՈՒԵՍՏ.

ՆԿԱՐՁԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

—

Պետութիւնը գոյութիւն ունի իրաւական, վարչական, տնտեսական և մանաւանդ կուլտուրական նպատակների համար։ Առանց այս վերջին նպատակի ամեն մի պետութիւն քանդում է իր գոյութեան հիմքը կազմող ոգի տակի հողը։

Կուլտուրական գործի պաշտպանութիւնն ու խրախուսանքը պետութիւնը դաձնում է իրեն մարդկային բարձր նպատակները իրագործող մի օրգան. նրան տալիս է լրջութիւն, վեհութիւն և հիացմունք արթնացնելու յատկութիւն։

Մեր հայկական նորաստեղծ պետութիւնն այնքան է ծանրաբեռնուած գաղթականական հոգսերով, որ չի կարողանում իր կուլտուրական բուն նպատակներին կեանք տալ, այդ ուղղութեամբ աշխատել։ Այս բանը արդարացնելի է, հասկանալի է, բայց պէտք է խոստովանուել, քցում է նրա հմայքը կուլտուրական մարդու աչքից։ Թւում է, որ նոյն իսկ այդ պայմաններում, մանաւանդ այժմ մեր պետութիւնը կարող է գոնէ փոքր չափերով զբաղուել իր այդ բուն նպատակով։

Պէտք է ասել, որ կարծես թէ մեր պետութիւնը սկսել է այդ ուղղութեամբ զբաղուել։ Վերջին օրերս հայ գեղարուեստագէտների ցուցահանդէսի գործերը Երևան փոխադրելու համար պետութեան յատկացրած 10 հազար ռուբլին այդ է ցոյց տալիս։

Դա մի անասելի ուրախալի երեւոյթ է. նա գալիս է հայ գեղարուեստների արտի վրայ ծանրացած այդ բեռը վայր գցելու, թէ հայ պետութիւնը կուլտուրական հարցերով չի զբաղում։ Առաջին փորձն արած է և այն էլ շատ յաջող։ Թէև ուժեղ չէր այս տարուայ ցուցահանդէսը։ բայց և այնպէս նրա համար արժէր 10 հազար և նոյնիսկ աւելին ծախսել, որպէսզի մեր հայ հասարակութեան լայն խաւերին ծանոթացնի մեր արուեստագէտների գործերը։

Ժամանակ է, որ մեր գեղարուեստը բուն Հայրենիքը գնայ, մօտենայ ժողովրդին՝ նրա վրայ ազդելու և նրանից նիւթեր քաղելու համար։

Բայց բաւական չէ, որ պետութիւնը հոգում է ցուցահանդէսը Երևան փոխադրելու ծախսը, նա աւելի մեծ պարտականութիւն ունի, նա պէտք է հայրենի մի օջախ ստեղծի նոյն երկրի ժողովածուների համար, նա պէտք է հիմք դնի պետական նկարչա-արձանագործական թանգարանի հիմնարկութեան. եթէ առայժմ անկարելի է շէնք շինել, բայց կարելի է, հեշտ է, անհրաժեշտ է գնել հայ արուեստագէտների լաւագոյն գործերը ապագայ թանգարանի համար։

Չպէտք է թոյլ տալ, որ այդ գործերն ընկնեն մասնաւոր մարդկանց ձեռք. դրանից յետոյ ընդհանուրի սեփականութիւն դարձնելն աննպատակ է դառնում ընդհանրապէս։ Այս ուղղութեամբ պէտք է աշխատի Հայոց Կառավարութիւնը, մանաւանդ նրա լուսաւորութեան նախարարութիւնը։

Ռոճեղ

ԱՌԵՒՏՐԱ-ԱՐԴ. ԿԵԱՆՔ

ԱԳՐԱՆՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՑՈՒՄ

—

Պղնձէ արջասպ (купоросъ)

Ի նկատի ունենալով որ արդէն սկսուել է խաղողի որթերի առաջին բժշկութեան ժամանակը և այն հանգամանքը, որ պղնձէ արջասպի շատ քիչ պաշար կայ, շնորհիւ սպեկուլեանտների պղնձէ արջասպի գները անասելի չափերի են հասել։ Կարճ ժամանակ դրա գնահատութիւնը 300 ռուբլուց բարձրացաւ մինչև 700 ռուբլի փութը, իսկ վերջին ժամանակներս մինչև իսկ 1000 ռուբլու (անգլիական մարկաներով)։

Այդպիսիները անհամբերութեամբ սպասում են Անգլիայից պղնձէ արջասպ ստանալուն, սակայն կասկածում են, որ դա չի սատցուի մինչև երկրորդ բժշկութեան ժամանակը։

—

Ծծումբ

Ծծումբը նոյնպէս պակաս դեր չէ կատարում խաղողի բժշկութեան մէջ, քան թէ պղնձէ արջասպը։ Ծծումբով բժշկելու ծամանակը գալով արդէն սկսուելու է ծծումբի որոնումը, որպիսին տեղական շուկայում կայ մեծ քանակութեամբ։ Բայց դրանով գլխաւորապէս օգտուում են սպեկուլիանտները, որոնք օր աւուր բարձրացնում են գները և հասցնում անհրաժեշտ գների, մինչև իսկ փութը 500 ռուբլի և աւելի։

—

Բրինձ

Պարսկաստանից, Բագուի վրայով, բաւականին մեծ քանակութեամբ բրինձ է ստացուում։ Բերուում է թէ մեծ և թէ փոքր քանակութիւններով, բայց, չնայած որ մեծ պաշարներ կան, բրնձի գները յամառ են և տրամադիր են բարձրանալու։ Ներկայումս Թիֆլիսում բրնձի գները հետևեալներն են.— սարոչինի բրինձը 270—300 ռ. փութը, մաշինի 270—290 ռ., ադուլի 350—360 ռ. փութը։

—

Պարսկական fիտիլ

Պարսկաստանի քիշմիշ բաւականին շատ է ստացուում, սակայն այդ մթերքի պահանջը, որպիսին շատերի համար շաքարի տեղ է գործածուում, նոյնպէս մեծ է։ Այդ պատճառով քիշմիշի գները բարձր են, մանաւանդ որ մեր Անդրկովկասի բոնները Պարսկաստանում, քիշմիշի գնահատման ժամանակ, շատ ընկած են։ Այժմ Թիֆլիսում քիշմիշը գնահատուում է այսպէս՝ բարձր տեսակը 380 ռուբլի փութը, 1. տեսակը 320—340 ռ. փութը, 2. տեսակը—280—300 ռուբլի։

Ընդհանրապէս գները ամուր են և բարձրանալու նշաններ կան։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 12 մայիսի

Անգրագէտ և սխալ մի քննադատութիւն է տպուել ձեր թերթի 99-րդ համարում, ամսոյս 10-ին տեղի ունեցած Նուխի-Արէշցիների երեկոյթի մասին—«Տոմսեր ճաշելու աշխատանք... հոգալ հիւրերին յարմարութիւններ բաւականութիւն տալու մասին... նախ՝ առաջինը հարկաւոր էր մի փոքր հաստատ լինեն»...—ահա այն հայերէնը, որով քննադատութեան ասպարէզն է իջել պ. Ցոլակ Նիկոդոսեանը։

Քննադատութիւնն էլ հակուած է դէպի զրախօսութիւնը, որովհետև հիմնուած է ակներև ստերի վրայ։ Ցայտարարութեան մէջ որևէ ռուսերէն չի եղել. ոչ էլ «грандіозный»—ինչպէս գրած է պ. Ցոլակը։ Ցետոյ՝ սրահի մէջ խճողում չկար։ Ներկայ էի։ Լաւ չէ չափազանցելը։ Ապա՝ անբարեխղճութիւն է, օր. Մրբիմանեանի աքանչելի նուագածութեան հետ չլիշատակել նաև օր. Մանդենեանի նոյնքան աքանչելի երգերը և օր. Էլիզայի շատ գողտրիկ ու տիպարային կերպով կատարած գնչուական սիրերգները։

Ինչ վերաբերում է պ. Ցոլակի անհանգստութեանը, թէ «կային ամերիկացի և անգլիացի հիւրեր» ու «նրանք յայտնում էին իրենց անբաւականութիւնը» և գուցէ պ. Ցոլակը—ինքը «վարմբում էր նրանց առաջ»—դա գուցէ մասամբ ճիշտ լինի միմիայն այն 3—4 անգլիացի հասարակ զինուորների վերաբերութեամբ, որոնք շատ աւելի՝ շոկոլադներ ցրուելով օրիորդներին և նրանց հետ շաղակրատելով էին զբաղուելու եկել, քան որևէ երեկոյթով։ Ամերիկացի հիւրերը և կան միայն կէս գիշերին, երբ երեկոյթի ամբողջ ծրագիրը վերջանում էր և սրահի մէջ ժողովրդական պարերն էին սկսում։ Թող անհանգիստ չլինի պ. Ցոլակը. ամերիկացիները գոհ սրտով մեկնեցին. այդ կողմից կարող եմ ապահովեցնել նրան։

Գանք այժմ պ. Ցոլակի տուած խրատին՝ Հայրենակց. Միութեան Վարչութեանը։ Խրատը լաւ է, երբ արդիւնք է բարեմտութեան և ոչ... մեծամտութեան։ Եւ ինձնից խրատ իրեն—շատ բարեմիտ խրատ—թող մի քիչ աւելի խնայէ գնի այն լեզուի մէջ, մի քիչ էլ համեստութիւն այն մտածութեան, որոնցով զինուած՝ մտնել կամենալ երբ և իցէ քննադատութեան գործին։

Վ. Փափազեան

—

ՊԱՏԱՍԽԱՆ

Իր նամակում պ. Փափազեանը յանձն է առնում վերականգնել ոչ թէ յիշեալ «Հայրենակցութեան» արժանապատուութիւնը, որի մասին էր իմ խօսքը, այլ իմ կողմից «անաչառօրէն» քննադատած այն «երեկոյթի», որին ներկայ էր ինքը պ. Փափազեանը։

Հասկանալի է պ. Փափազեանի խոցուած ամբիցիան։ Նա վիրաւորուած է՝ ես չեմ հաւանել իրեն սիրած «գնչուական սիրերգները»։

Իմ լեզուն նրան դուր չի եկել։ Իսկ իմ քննադատութիւնը «անգրագէտ և սխալ» է երևացել նրան։

Սակայն, եթէ մի կողմ դնենք այն «ակներև ստերը», որ իբր թէ «սրահի մէջ խճողում չկար» և իբր թէ երեկոյթին ներկայ եղած անգլիական զինուորականները միայն «օրիորդներին շոկոլադներ ցրուելով էին զբաղուած», և եթէ ի նկատի առնենք, որ պ. Փափազեանը երեկոյթի ծրագրի մէջ մասնակցելիս է եղել, իսկ այդ ես աչքաթող եմ արել... ապա մեզ համար պարզ կը լինի, որ լեզուի մասին խօսելը և տպագրական վրիպակները անգրագիտութեան արդիւնք համարելը բղխում է լոկ պ. Փափազեանի ամբիցիայից։

Պ. Փափազեանը գոհ է մնացել այդ երեկոյթից, ուստի ամեն մի այլ մտածելակերպ երեկոյթի վերաբերեալ սխալ է թւում նրան։

Ճաշակների մասին չեմ վիճում։

Ցոլակ Նիկոդոսեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Հրատարակիչ՝ Հայ ժողովրդական Կուսակցութիւն

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹԻՒՆԸ

—

ԳՆԱՑՔՆԵՐԸ ԹԻՖԼԻՍԻՑ ԳՆՈՒՄ ԵՆ ՓՈԹԻ

Գ. № 1 ճեպընթաց՝ երեկ. 7 ժ. 30 ր.
Միխայլովից —գիշ. 10 ժ. 52 ր.
Շորապանիից գիշ. 1 ժ. 34 ր.
Սամտրեդիից -գիշ. 3 ժ. 50 ր.
Փոթի հասնում է առաւ. 5 ժ. 50 ր.

Պլացկարտի գինը բոլոր վագոններում 20 ռուբլի է։

Գ. № 2 պոստատար՝ առ. 10 ժ. 30 ր.
Միխայլովից — ցեր. 8 ժ. 8 ր.
Շորապանիից— երեկ. 6 ժ. —
Սամտրեդիից— եր. 8 ժ. 34 ր.
Փոթի է հասնում գիշ. 10 ժ. 43 ր.

Պլացկարտի գինը բոլոր վագոններում 10 ռուբլի է։

Գ. № 9 ճանապարհորդական մինչև Քութայիս

Դուրս է գալիս երեկ. 10 ժ. 30 ր.
Քութայիս է հասնում առ. 7 ժ. 21 ր.

Պլացկարտի գինը բոլոր վագոններում 5 ռուբլի է։

Գ. № 19 ճանապարհորդական մինչև Բորժոմ

Դուրս է գնում ցերեկ. 3 ժ. 30 ր.
Գորուց երեկ. 6 ժ. 30 ր.
Բորժոմ է հասնում եր. 9 ժ. 27 ր.

Պլացկարտի գինը բոլոր վագոններում 5 ռուբլի է։

Գ. № 4 պոստատար՝ մինչև Բագու
Դուրս է գնում գիշեր. 1 ժ. 10 ր.

Գ. № 8 ճանապարհորդական՝ մինչև Գանձակ

Դուրս է գնում ցերեկ. 3 ժ. 35 ր.
Գ. № 6 ճեպընթաց՝ երեկ. 9 ժ. —

Պլացկարտի գինը մինչև Բագու՝ I կլ. համար 60 ռ., II կլ.—40 ռ., III կլ.—20 ռ.։

ԴԷՊԻ ԿԱՐՍ—ԵՐԵՒԱՆ

Գ. № 4 մարդատար—ցեր. 1 ժ. 40 ր.

ԹԻՖԼԻՍ ԵԿՈՂ ԳՆԱՑՔՆԵՐԸ ՓՈԹԻՑ ԹԻՖԼԻՍ

Գ. № 2 ճեպընթաց՝ [illegible]
Փոթիից դուրս է գալիս [illegible] 11 ժ.
Գ. № 4 [illegible]
Փոթիից դուրս է գալիս առ. 7 ժ. 40 ր.

Գ. № 12 Քութայիսից

Գալիս է — — — երեկ. 8 ժ. 15 ր.
Քութ. դուրս է գալիս եր. 10 ժ. 10 ր.

Գ. № 20 Բորժոմից

Գալիս է — — — առաւ. 7 ժ. 20 ր.
Բորժ. դուրս է գալիս գիշ. 12 ժ. 46 ր.

ԲԱԳՈՒԻՑ

Գ. № 3 պոստատար—ցեր. 4 ժ. 30 ր.
Գ. № 5 ճեպընթաց—առ. 7 ժ. —
Գ. № 7 ճանապարհ. Գանձակից առ. 8 ժ. 30 ռ.
Գ. № 5 պլացկարտով. պլացկարտի գինը I կլ. 60 ռուբ., II կլ.—40 ռ., III կլ.—20 ռուբլի է։

ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ ԵՒ ԿԱՐՍԻՑ

Գ. № 3 պոստատար—առ. 11 ժ. 30 ր.

Բացի դրանցից գնացքներ են երթևեկում կիրակի և տօն օրերին։

ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՄՑԽԵԹԻ ՄԻՋԵՒ

հետևեալ գնացքներն են երթևեկում.

Գ. № 61 Թիֆլիսից

Գ. № 63 — — — ցեր. 3 ժ. —

Մցխեթից գալիս են

Գ. № 62 — — առաւ. 11 ժ. 10 ր.
Գ. № 64 — — երեկ. 7 ժ. 20 ր.

ՑՈՒՑԱԿ

Հայաստանի Հանրապետութեան գնացքների երթևեկութեան

Այս տարուայ ապրիլի 14-ից մարդատար գնացքները Երևանից Սանահին մեկնելու են շաբաթը 4 անգամ

Երեւանից—Սանահին

մեկնում է

Երեքշաբթի, Հինգշաբթի, Շաբաթ, Կիրակի — առ. ժ. 8-ից անց 20 ր.

Սանահինից—Երեւան

վերադառնում

Երկուշաբթի, Չորեքշաբթի, Ուրբաթ, Կիրակի

Հայաստանի Հանրապետութեան գնացքների երթևեկութիւնը Սանահինում յարմարեցուած է վրացական գնացքների մեկնելու հետ։

ԱՌԱՋ. ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնուած 1880 թ.

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Բաց է՝ ամեն օր, բացի կիրակի օրերից.

«606» եւ «914»-ի նեռուսկում առաւօտեան ժ. 11—12.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն, վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների։

Բ. Ի. ԱՂԱՍԱՐԵԱՆ—10—12 ժ. ներքին ջղային երեխայոց հիւանդութիւնն և ծաղկահատ։

Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու հիւ. վիրաբուժութիւն և վեներակ. (սիֆիլիս) հիւ.։

Ռ. Մ. ՎԱՅՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. շաբաթ—կանանց հ. և մանկաբարձ.։

Է. Ս. ԿԱՐՈՒԿԵՍ — ԲԷԲՈՒՐԻՇԻՎԻ—12—1 ժ. երկուշ. չորեքշ. ուրբաթ—կանանց հիւ. և մանկաբարձ.։

Ց. Ա. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ.։

Վճարը 3 ռ.։ Քաւորները ձրի։ Համախորհրդի և կոնսիլիումի ու օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝ 0—14 Բժշկապ. Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Հայերի մէջ առևտրական կրթութիւն տարածող Կովկասեան ընկերութեան։

Նիկոլայևսկի № 36։

0—11 Տեսուչ՝ Գ. Կ. Տեր-Դաւթեան

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ"-Ի

գրասենեակում վաճառւում է նրա հրատարակութեամբ լոյս տեսած

ԳԷՈՐԳ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

ԶԵՄՍՏԻՈՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ԳԻՐՔԸ

Գինը 50 կոպէկ,

Դիմել գրասենեակ՝ Головинскій пр.

№ 41. 0—88

Տպարան «Մամուլ»—անօրէններ Մ. Էփրիկեան և Ց. Մելիքեան։ Լոբիս-Մելիքեան փող., № 22.